Ա. Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ...

Նվիրում եմ սիրելի ամուսնուս՝
Պետրոս Հովհաննիսյանի, անմոռաց հիշատակին:

1031800 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
151

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
151

ԵՐԵՎԱՆ 2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ու 270

Խմբագիր՝ պրոֆեսոր Պ. Հ. Հովհաննիսյան

Ա. Ա. Ութուջյան
Ու 270 Հայ պատմագիտական միտքը XIV-XVII դարերում/ **Ա. Ա. Ութուջյան**.– Եր.: Պատմության ինստիտուտ, 2016.- 115 էջ

„Հայ պատմագիտական միտքը XIV-XVII դդ." Ուսումնասիրությունն ընդգրկում է ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական, տնտեսական ու մշակութային անկման պայմաններում հայտնված հայ պատմագիտական մտքի անցած ուղին: Պատմագիտական կուռ և ընդարձակ ատաղձ ունեցող երկասիրություններին փոխարինելու եկան ձեռագրաց հիշատակարաններն ու մանր ժամանակագրությունները, ողբերն ու վարքերը: Նման պայմաններում, սակայն, կարծես հրաշքով, XIV-XVII դ. ունեցան նաև եզակի պատմագիրներ: Դա հայ ոգու և մտավոր ներուժի մի զարմանալի, անհնարին թվացող դրսևորում էր:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հասարակայնությանը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-37-4
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016

ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(համառոտ ակնարկ)

XIV-XVII դդ. Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային ընդհանուր անկման պայմաններում, վաչկատուն ցեղերի անընդհատ կրկնվող ասպատակությունների ու նրանց իրականացրած հարկային ու կրոնական դաժան քաղաքականության հետևանքով ծանր իրավիճակում հայտնվեց նաև հայ պատմագիտական միտքը: Բնականաբար, երկրի ու ժողովրդի կյանքում բացասական հետևանքներ ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունները, մշակութային խոր անկումը չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել պատմագիտական ժանրերի զարգացման վրա: Այս պատմաշրջանում հայ մտավոր իրականությունը չունեցավ քիչ թե շատ նշանակալի պատմագրական երկասիրություններ ստեղծելու պայմաններ: Պատմագրական կուռ և ընդարձակ ատաղձ ունեցող երկասիրություններին փոխարինելու էին գալիս ձեռագրաց հիշատակարաններն ու մանր ժամանակագրությունները, ողբերն ու վարքերը, որոնք 200 տարուց ավելի իրենց վրա էին կրում երկրում հաստատված մղձավանջն արձանագրողի դերը:

Նման պայմաններում, անկասկած, հրաշք է, որ XIV-XVII դարերը ունեցան նաև իրենց եզակի պատմագիրները: Դա հայ ոգու և մտավոր ներուժի մի զարմանալի, անհնարին թվացող դրսևորում էր:

XVII դարի երկրորդ կեսի երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի քիչ թե շատ կայունացումը, ծավալված լուսավորական շարժումն ու մշակութային զարթոնքը իրենց զարգացման ծիրի մեջ ընդգրկեցին նաև արդեն վաղուց անկում ապրող պատմագիտական միտքը: Միայն XVII դարի երկրորդ կեսին ստեղծագործում էին շուրջ մեկ տասնյակից ավելի պատմագիրներ, ուղեգրողներ, ժամանակագիրներ և այլն: Վերականգնվեցին հայ պատմագիտական մտքի հիանալի ավանդույթները, որոնց աննախընթաց, եզակի արդյունքը եղավ XVIII դարի վերջին հրապարակ իջած Միքաել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը»:

XIV-XVII դդ. հայ պատմագիտական մտքի ձեռք բերած արդյունքներն ամփոփվել են հայ պատմագրության զարգացման ընթացքը ներկայացնող մի քանի աշխատություններում: Դրանցից շատերը թռուցիկ, ընդհանուր ցանկեր են՝ մի քանի սեղմ բնութագրումներով: Նկատի ունենք վենետիկյան Մխիթարյան միաբաններ Գարեգին վրդ. Զարբհանալյանի[1], Ղևոնդ Ալիշանի[2], Արսեն վրդ. Ղազիկյանի[3], ինչպես նաև Վ. Փափազյանի[4] և այլոց համապատասխան ակնարկները:

---

[1] Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, նույնի՝ «Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883:

[2] Ղ. Ալիշան, Հայապատում. պատմիչք և պատմությունք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 125-133:

[3] Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, հատոր Ա, Վենետիկ, 1909 - 1912:

[4] Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության (սկզբից մինչև մեր օրերը), Թիֆլիս, 1910, էջ 203-205:

Առավել հետազոտական-վերլուծական բովանդակություն ունի ժամանակաշրջանի պատմագիտական երկերի գեղարվեստական- գրական արժեորմանը նվիրված վաստակաշատ գրականագետ Մանուկ Աբեղյանի հայ հին և միջնադարյան գրականության պատմության երկհատորյակի 1942-1943 թթ. ընթացքում շարադրված երկրորդ հատորի համապատասխան բաժինը[5]: Աշխատանքի գրականագիտական բնույթը թույլ չի տվել բազմավաստակ հեղինակին գնահատելու ներկայացված հեղինակների համապատասխան երկասիրությունների պատմագրական արժեքը: Անշուշտ, չի կարելի համերաշխվել առանձին պատմագիրներին տված նրա որոշ գնահատականների հետ: Այսպես, Թովմա Մեծոփեցու երկասիրության վերաբերյալ նրա վճիռն ուղղակի արդարացի չէ. «աննշան է Մեծոփեցու այս պատմական գործը»[6]:

Կարծում ենք չի կարելի կիսել նաև Զաքարիա Քանաքեռցուն տրված նրա բնութագիրը. «Զաքարիան կատարյալ պարզամիտ է, մի լեռան հովվի, մի ուղտապանի չափ, խիստ նեղ հայացքով»[7]:

Հայ հին գրականության պատմության չափազանց արժեքավոր համալսարանական ձեռնարկ է երկասիրել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Կյուրեղ վրդ. Քիպարյանը: Աշխատությունն ընդգրկում է նախամաշտոցյան

---

[5] Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երևան, 1970:

[6] Նույնը, էջ 419:

[7] Նույնը, էջ 525:

շրջանից մինչև XVII դարի վերջերի գրական ու պատմագրական երկասիրություններին նվիրված ակնարկներ [8]:

Մոտավորապես նույն սխեմայով է գնահատվել ընդհանրապես հայկական մշակույթի պատմությունն ու այդ համակարգում առանձնացված պատմագիտական երկերի բնութագրումը, որը կատարել է գրականագետ Ա. Առաքելյանը[9]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ պատմագիրների գործերի վերաբերյալ մի ընդհանուր, սեղմ ակնարկ է շարադրել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Նորայր եպ. Պողարյանը և այն հասցեագրել ուսուցիչներին ու ուսանողներին[10]: Մեկ-երկու էջերի սահմաններում Պողարյանը բնաթագրել է մեզ հետաքրքրող պատմագիրներ Գրիգոր Խլաթեցու, Թովմա Մեծոփեցու, Սիմեոն Ապարանեցու, Սիմեոն Լեհացու, Գրիգոր Դարանղեցու (Կամախեցի), Առաքել Դավրիժեցու, Հակոբ Կարնեցու, Ստեփանոս Լեհացու, Երեմիա Քեռմուրճյանի և Զաքարիա Քանաքեռցու համապատասխան երկասիրությունները և ապա ներկայացրել դրանցից առանձնացված հատվածներ:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» բուհական առարկայի շրջանակում պրոֆ. Ստ. Մելիք Բախշյանը շա-

---

[8] Կ. Քիպարյան, Պատմություն հայ հին գրականության, Վենետիկ 1944, տե՛ս նաև սույնի երկրորդ լրացված ու համալրված հրատարակությունը՝ Վենետիկ, 1992:

[9] Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր 1-3, Երևան, 1959-1975:

[10] Նորայր եպ. Պողարյան, Հայ գրողներ (Ե – ԺԷ դար), Երուսաղեմ, 1971:

րադրել է մի դասագիրք, որը ժամանակագրական կարգով ներկայացնում է հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հայ և օտար սկզբնաղբյուրները, այդ թվում և մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմագրական երկերը: Հասկանալի է, որ այդ նյութերը հեղինակին հետաքրքրել են զուտ աղբյուրագիտական տեսանկյունից, հետևաբար դրանց պատմագրական նշանակությունը չի արժևորվել [11]:

XIV-XVII դդ. հայ պատմագիտական մտքի ձեռք բերած արդյունքները լավագույնս մեկնաբանվել են պատմաբանների խորհրդահայ դպրոցի խոհուն ներկայացուցիչներից մեկի՝ Լևոն Բաբայանի կողմից: Հայ պատմագրության բազմադարյան ուղու վերլուծմանն ու արժևորմանը նվիրված նրա եռահատորյակի երրորդ հատորը մասամբ է վերաբերում մեզ զբաղեցնող խնդրին[12]: Նկատի ունենք Թովմա Մեծոփեցու, Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի), Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու, Զաքարիա Ագուլեցու և Երեմիա Քեռմուրճյանին նվիրված հատվածները: Ակներև է, որ հեղինակը ուշադրությունը բևեռելով միմիայն պատմագրական լայն կտավի ստեղծագործությունների վրա, անտեսել է պատմագրկան մյուս ժանրերը՝ օրագրություն, վարք, հիշա-

---

[11] Ստ. Մելիք Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, դասագիրք բուհերի համար, Երևան, 1979 (տե՛ս նաև սույնի երկրորդ և երրորդ հրատարակությունները, Երևան 1989, 1996):

[12] Լ. Հ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984:

տակարան, մանր ժամանակագրություն, պատմական ողբեր և այլն:

Անշուշտ, կատարվել է մեծ ու շնորհակալ աշխատանք, որը սակայն չի ներկայացնում հայ պատմագիտական միտքն ամբողջությամբ: Բացի այդ, հեղինակը, հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ներկայացվող երկասիրությունների բովանդակության վերաշարադրանքին՝ առավել նվազ հետաքրքրություն է ցուցաբերել դրանց պատմագրական արժեքի վրա:

XIV-XVII դդ. հայ պատմագիտական մտքի զարգացման ընթացքը համառոտ և ընդհանուր գծերով ներկայացված են հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության բազմահատորյակներում. նախ ութհատորյակի IV [13] և ապա քառահատորյակի II և III հատորներում[14]:

Անշուշտ, պատմագրական այս ակնարկում չենք անդրադառնալու միջնադարյան հեղինակների քննական-բաղդատական երկասիրությունների առաջաբաններում տեղ գտած այս կամ այն հեղինակի վերաբերյալ վերլուծությունների գնահատականին, որը մեր խնդիրների մեջ չի մտնում:

---

[13] Տե՛ս Մ. Հ. Դարբինյան, Հայ պատմագրությունը XIV-XVIII դարերում, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատոր IV, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան 1972, էջ 491-503:

[14] Պ. Հ. Հովհաննիսյան, Հայ պատմագրությունը ուշ միջնադարում, տե՛ս «Հայոց պատմություն», հատոր II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 641-648: Նույնի՝ «Հայ պատմագրությունը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին կեսին», նույն տեղում, հատոր III, Գիրք առաջին, Երևան, 2010, էջ 104-111:

Նկատի ունենք Թովմա Մեծոփեցու, Հակոբ Կարնեցու, Առաքել Դավրիժեցու, Երեմիա Քեռմուրճյանի և այլոց քննական բնագրերի հրատարակությունները և այդ հրատարակություններին ուղեկցող առաջաբանները, որոնք պարտադիր պարունակում են ոչ միայն տվյալ բնագրի ստեղծման հետ կապված խնդիրներ, այլ նաև պատմագիտական գնահատականներ:

ՊԱՏՄԱԳԻՏԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Համատարած անկման, անհույս և անհեռանկար դարաշրջանի առաջին պատմագիրը Գրիգոր Ծերենց Խլաթեցին է («որդի Ծերին»): Գրիգոր Խլաթեցին ծնվել է 1349 թ-ին Խլաթ քաղաքում: Նախնական ուսումնառությունը ստացել է Ցիպնավանքի հոչակավոր ուխտում՝ 6 տարի աշակերտելով Վարդան Ճգնավորին, այնուհետև 8 տարի սովորել է Սյունյաց Երնջակ գավառի Ապրակունյաց վանքում, որտեղ աշակերտել է հոչակավոր Հովհան Որոտնեցուն: Նրա ուսումնակիցն է եղել դարձյալ հոչակավոր Գրիգոր Տաթևացին: 1386 թ-ին՝ Որոտնեցու մահից հետո, հաստատվել է Արճեշ քաղաքի Սուխարա վանքում, որտեղ էլ Սարգիս վարդապետի կողմից ստացել է վարդապետության աստիճան: Երկու տարի ճգնել է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքում: Մի կարճ շրջան վարել է Սուխարա վանքի Խառաբաստա, ապա Բզնունյաց Արծկե քաղաքի Ցիպնա անապատի առաջնորդությունը: Այստեղ էլ 1425 թ-ի մայիսի 27-ին, 75 տարեկան հասակում նահատակվել է քուրդ հրոսակների կողմից[15]:

Գրիգոր Խլաթեցին հայ մատենագրության աչքի ընկնող մշակներից է: Նա հեղինակ է հոգևոր երկերի՝ գանձերի վարքերի, վկայաբանությունների, ճառերի, ներբողների, մեկնությունների, հիշատակարանների և այլն: Անշուշտ, պատ-

---

[15] Գրիգոր Խլաթեցու Վարք-վկայաբանությունը տե՛ս Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ 1903, էջ 264-272: Հմմտ. Ղ. Փիրումյան, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 75-77:

շաճ ուշադրության է արժանի նրա խմբագրած «Յասմավուրք» ժողովածուն, որտեղ ընդարձակորեն ներմուծել է իր օրերում նահատակված վկաների պատմությունները: Այստեղ կարևոր տեղեկություններ է հաղորդում ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության առանձին իրադարձությունների վերաբերյալ: Անուրանալի արժեք ունի 1422 թ. Ծերենցի հեղինակած «Յիշատակարան աղէտից» երկասիրությունը[16]: Սույն բնագիրը, որ բաղկացած է 460 չափածո տողից, երբեմն համառոտ, երբեմն էլ ընդարձակ ներկայացնում է 1386-1422 թթ. ընթացքում դեպի Հայաստան և հարևան երկրներ Թոխթամիշի, Լենկ-Թեմուրի, թուրքմենական և այլ քոչվոր ցեղերի աշխարհավեր արշավանքներն ու դրանց աղետալի հետևանքները:

Հեղինակի կարծիքով, Հայոց երկրի կործանումը և հայ ժողովրդի կրած աղետներն ու տառապանքները հետևանք էին հայերի գործած բազմաթիվ մեղքերի, գլխավորապես անմիաբանության ու վախկոտության: Որպես ժամանակակից և, որ առավել կարևոր է, ականատես Ծերենցը ճշմարտապատում է, նրա հաղորդած փաստերը վավերական են և հարազատ, քիչ ավելի ուշ ստեղծագործած Թովմա Մեծոփե-

---

[16] «Յիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում, զոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականուն Ծերենց կոչի Խլաթեցի», պատմական վիպասանություն, հրատարակեց Գր. Խալաթյանց, Վաղարշապատ, 1897: Տե՛ս նաև քննահամեմատական բնագիրը, որ կազմել է Լ. Ս. Խաչիկյանը՝ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 272-288:

ցու երկասիրությանը, դեռ ավելին՝ հաճախ լրացնելով նրան: Չնայած իր չափածո ոճին և բանաստեղծական հանգամանքին՝ Խլաթեցու «Յիշատակարան»-ը հայ պատմագրական այդ ժանրի լավագույն ստեղծագործություններից է[17]:

Պատմաշրջանի հայկական մշակույթի և մասնավորապես պատմագրության համընդհանուր անկման պայմաններում նույնպես երջանիկ բացառություն կարող են դիտվել Թովմա Մեծոփեցու պատմագրական ստեղծագործությունները:

Թովմա Մեծոփեցին ժամանակի հայ իրականության ամենաազդեցիկ գործիչներից է, որը վայելում էր համահայկական հարգանք և պատկառանք: Նա նաև այն հայ երջանիկ ու եզակի պատմագիրներից է, որ ունեցել է իր կենսագիրը: Պահպանվել է նրան նվիրված վարքը, որ հեղինակել է իր աշակերտ Կիրակոս Բանասերը (հայտնի է նաև Կիրակոս Ռշտունեցի անունով)[18]:

---

[17] Գրիգոր Խլաթեցու պատմագիտական հայացքների մանրամասն վերլուծությունը տե՛ս Ս. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու պատմագիտական երկերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 2, էջ 128-136:

[18] «Պատմութիւն Մեծի դարձունապետին Թումայի, զոր արարեալ Կիրակոս Բանասէր վարդապետի», տե՛ս Գարեգին վրդ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նոր նյութերով), «Արարատ», 1913, N 9, 10, 12: 1914 N 1, տե՛ս նաև առանձին գրքով, Վաղարշապատ, 1914: Տե՛ս նաև նոր հրատարակությունը՝ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 276-297, արևելահայ աշխարհաբար թարգմանությունը՝ Թովմա Մեծոփեցի, Պատմագրական երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մադոյանի, Երևան 2003, էջ 82-88:

Թովմա Մեծոփեցին ծնվել է 1378 թ-ին Վասպուրականի Քաջբերունյաց գավառի Աղի գյուղաքաղաքում (եղել է «ի յազնուական ազգէ»): 1386-1395 թթ. սովորել է Մեծոփա վանական դպրոցում («ի սուրբ ուխտն Մեծոփա»), աշակերտել Հովհաննես վրդ. Մեծոփեցուն և Մատթեոս քահանային: Կրթությունը շարունակել է Արճեշ գավառի Խառաբաստի (Սուխարա) վանական դպրոցում (1395-1406) և Տաթևի համալսարանում (1406-1408) աշակերտելով նշանավոր Գրիգոր վրդ. Տաթևացուն: Վերջինս էլ 1408 թ-ին Երևանում Թովմային շնորհել է վարդապետական աստիճան և տվել Վասպուրականում քարոզչությամբ զբաղվելու, ուսուցանելու իրավունք: 1408 թ-ին տեղափոխվել է Մեծոփա վանք և ավելի քան 35 տարի վարել վարդապետարանի ռաբունապետի պաշտոնը դասավանդելով «ամենայն անձանց գրոց աշակերտելոց»:

Թովման ժամանակակիցների կողմից հորջորջվել է «բազմերջանիկ», «խորիմաստ», «սրբասեր» վարդապետ, որն ուներ «զամենայն ի յիմքն ունակացեալ աստուածային և մարդկային առաքելութեամբ զարդարեալ»[19]:

Թովման ապրել է բուռն ստեղծագործական և ազգային-եկեղեցական կյանքով: Վճռական դերակատարություն է ունեցել 1441 թ-ի իրադարձություններին, եղել Կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու հիմնական գաղափարախոսներից և դերակատարներից մեկը: Թովման

---

[19] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 276-279 և հտ. :

ծավալել է մանկավարժական, գիտական, մատենագրական բուռն գործունեություն: Ընդօրինակել և խմբագրել է բազմաթիվ ձեռագրեր, գրել հիշատակարաններ, քարոզներ, կանոնական խրատներ, վկայաբանություններ, նամակներ, բանաստեղծություններ, քերականագիտական-լեզվաբանական աշխատություններ, կատարել մեկնություններ, կազմել և խմբագրել ծիսական բնագրեր, երկասիրել պատմագրական երկեր և այլն:

Հեղինակ է երկու տասնյակից ավելի գրությունների, որոնցից հիշատակելի են հայոց գրերի գյուտին նվիրված «Զիարդ գտեալ եղեւ գիրս Հայոց», հայոց կաթողիկոսների մի ամբողջական ցանկ՝ Գրիգոր Լուսավորիչից մինչև իր օրերի կաթողիկոսը՝ Գրիգոր Թ Մուսաբեկյանցը, «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման» քերականական, լեզվաբանական դասագիրքը և այլն : Հիրավի պատկառելի մի ժառանգություն, որը պատմագրին դարձնում է հայ մատենագրության ամենաբեղմնավոր հեղինակներից մեկը[20]: Անշուշտ, մեզ առաջին հերթին հետաքրքրում են նրա պատմագրական երկասիրությունները, որ թվով չորսն են, և ամենաարժեքավորն իր մատենագրության մեջ: Դրանք են՝

1. «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց»[21],

---

[20] Թովմա Մեծոփեցու գրական ժառանգության մասին մանրամասն տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 39, 54 :

[21] Նույնը, էջ 1-217:

2. «Վասն միաբանութեան Հայոց եւ կաթողիկոս ձեռնադրութեան»[22],

3. «Յաղագս Էջմիածնի օրհնութեանն և ձեռնադրութեանն»[23],

4. «Վասն աքսորման Տէր Կիրակոս կաթուղիկոսին»[24]:

Լենկ-Թեմուրը համաշխարհային պատմության նշանավոր դեմքերից է և լիովին բացատրելի է նրան նվիրված բազմալեզու, բազմաժանր հսկայածավալ գրականության առկայությունը: Անշուշտ, այդ գրականության մեջ իր արժանի տեղն ունի նաև հայ պատմագրի երկասիրությունը, որ հատուկ նվիրված է Թեմուրի և նրա հաջորդների գործունեությանը: Աշխատանքի շարադրանքը հեղինակը սկսել է 1430 թ-ին և ավարտել 1440 թ-ին: Ճիշտ է, այն փոքրածավալ երկասիրություն է, սակայն հույժ կարևոր է, որը ժամանակագրորեն ընդգրկում է 1386-1440 թթ. միջև տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությունը: Չափազանց կարևոր է նաև, որ հեղինակը, այդ տարիների ընթացքում տեղի ունեցած բոլոր դեպքերի ոչ միայն ժամանակակիցն է («տեսաք աչօք եւ լուաք ականջօք»), այլև հաճախ մասնակիցը:

Երբ համեմատում ենք Թովմայի հաղորդած տեղեկությունները ժամանակակից հիշատակարանների համապատասխան վկայությունների և օտար պատմագրական ժողո-

---

[22] Նույնը, էջ 218-235:

[23] Նույնը, էջ 236-256:

[24] Նույնը, էջ 257-275:

վածուների հաղորդած տվյալների հետ, ապա տեսնում ենք, որ դրանք հիմնականում պատմականորեն հավաստի են: Հայոց պատմության և մշակույթի լավագույն գիտակներից մեկի՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գնահատությամբ Թովմայի պատմագրական երկերը անգնահատելի աղբյուրներ են իբրև ժամանակակից և ականատես անձի նկարագրություն, առանց որոնց մեր տեղեկությունները թերի կլինեին պատմաշրջանի այնպիսի դեպքերի մասին, որպիսին արյունարբու Լենկ-Թեմուրի և նրա հաջորդների արշավանքներն են, և Հայրապետական աթոռի վերանորոգությունը Սուրբ Էջմիածնում[25]:

Մեծոփեցին իր Պատմությունը շարադրել է տարեգրության սկզբունքով. նախ տալիս է տարեթիվը, այնուհետև տեղի ունեցող իրադարձությունները: Մեղմ, սակայն հավաստի տեղեկություններ է հայտնում Լենկ-Թեմուրի արշավանքների հետևանքով Հայաստանում կատարված ավերածությունների, թալանի, կողոպուտի փաստերի վերաբերյալ: Հետաքրքիր է և կարևոր, որ նա նկարագրում է նաև հայերին հարևան ժողովուրդների՝ օրինակ վրացիների, նկատմամբ կիրառված քաղաքականությունը: Մեծոփեցին, փաստորեն, անդրադառնում է ոչ միայն Հայաստանում, այլ նաև հարևան երկրներում ասպատակիչ ցեղերի քաղաքականության դրսևորման երևույթներին:

---

[25] Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ ԻԷ:

Հեղինակը մանրամասն մեզ է ներկայացնում Լենկ-Թեմուրի արշավանքները՝ հատկապես կանգ է առնում առաջին արշավանքի ժամանակ Վան քաղաքի պաշտպանության իրադարձությունների վրա, թե ինչպես քաղաքը գրավելուց հետո «զպիղծ վիշապն անդնդային Թեմուրը» կարգադրում է Վանի պաշտպաններին բերդի պարիսպներից ներքև շպրտել, և շեշտում, որ այնքան շատ էին ներքև շպրտվածները, և այնքան բարձր էր մահացածների կույտերը, որ վերջին ընկնողները այլևս չէին մահանում: Պատմիչը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թեմուրի որդիներ Միրանշահի, Աբու Բաքրի, Ջելայիրյանների ցեղապետ Յուսուֆի միջև տեղի ունեցած ընդհարումների մասին, և այդ պատկերի վրա հայ ժողովրդի վիճակը:

Թովման ողբում է Հայաստանի ծանր իրավիճակը և, կարելի է ասել իբրև ողբերգու, նա զիջում է միայն Արիստակես Լաստիվերցուն: Որպես հոգևորական՝ նա հայ ժողովրդին հասած դժբախտությունները բացատրում է մարդկանց՝ Աստծո հանդեպ գործած մեղքերով. «եւ այս ամենայն երկնի վրայ մեր վասն մեղաց մերոց եւ չար գործոց»: Միևնույն ժամանակ նա Հայաստանի նման իրավիճակը բացատրում է երկրի աշխարհիկ տերերի՝ «պիղծ և զազրելի առաջնորդների» գործողություններով, նրանց խաբեություններով և Աստծո նկատմամբ սիրո բացակայությամբ[26]: Շեշտում է հատկապես ազահության ախտը, միմյանց հանդեպ ատելության

[26] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, էջ 95:

փաստերը, ժողովրդի բարոյական դիմագիծը խաթարող արարքների մասին, որոնք էլ հենց եղան ազգի ներքին անմիաբանության պատճառ և ի վերջո արդյունքը եղավ երկրի ավերումը, ժողովրդի բռնագաղթը: Չափազանց արժեքավոր է Մեծոփեցու հիշատակարանը: Այն ունի առաջնակարգ սկզբնաղբյուրի նշանակություն Մայր աթոռի տեղափոխության վերաբերյալ: Ինչպես արդեն նշել ենք, Մեծոփեցին ամենաակտիվ մասնակիցներից է եղել Հայոց կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերահաստատելու գործում: Այնքան էր նա այս գաղափարով ապրում, որ դիմելով Աստծուն խնդրում է. «եւ ինձ մահ ոչ տաճէ մինչեւ բարցեալ տեսից զդուռն Էջմիածնին»[27]:

Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին նրա համար մի հույս է, որ կաթողիկոսից հետո Էջմիածնում կնստի և հայոց թագավորը («թագաւոր նստեցի յԷջմիածինն»):

Անշուշտ, 1441 թ-ի ակտը մեծագույն իրադարձություն է հայոց կյանքում: Այնքան կարևոր է այս փաստը, որ Թովման մի առանձին գրվածք է հատկացրել դրան՝ արդեն հիշատակված իր «Հիշատակարանը»[28]:

«Հիշատակարան»-ը, փաստորեն, Թովմայի Պատմության շարունակությունն է: Այստեղ հեղինակը ներկայացնում է իր օրերում Հայոց եկեղեցու խոր ճգնաժամը և փաստում Կաթողիկոսական աթոռի փոխադրման անհրաժեշտությու-

---

[27] «Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը», հրատարակեց Կ. Կոստանյացը, Թիֆլիս, 1892:
[28] Նույնը, էջ 62-63:

նը, խոսում այդ ակտի դրդապատճառների մասին: Թովման 12 պատճառներ է հիշատակում Աթոռի տեղափոխության անհրաժեշտության վերաբերյալ: Ամենակարևորը, որ Սսի կաթողիկոսական աթոռը դարձել էր կաթոլիկական պրոպագանդայի մի կենտրոն, որտեղ ոտնահարվում էին Հայոց եկեղեցու ավանդական կանոններն ու սովորությունները, որ կաթոլիկությանը հարիր նորամուծություններ էին մտցվում Հայոց եկեղեցու կանոններում ու ծեսերում: Թովման և իր գաղափարակիցները հնարավոր բոլոր միջոցներով պայքարում էին այդ երևույթների դեմ: Դա անհրաժեշտ էր ոչ միայն ժողովրդի դավանական միասնության, հոգևոր ուժերը միավորելու պահանջով, այլ նաև քաղաքական միասնության, ազգային մշակույթի ինքնուրույն զարգացման ու ինքնատիպության պահպանման խնդիրներով: Ի վերջո ներկայացնում է 1441 թ-ի հրավիրված ազգային եկեղեցական ժողովը, կաթողիկոսի ընտրությունը, և իր անձնական մասնակցությունը այդ ակտին: Նա մեծ ջանքեր է թափել նորընտիր կաթողիկոս Կիրակոս Ա Վիրապեցուն օգնելու, Աթոռը կարգավորելու, և աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ:

Առանձնակի արժեք ունեն նրա տեղեկություններն այն մասին, թե ինչպես էր գործուն մասնակցությամբ նորընտիր կաթողիկոսը չեղյալ հայտարարում Աղթամարի աթոռի բանադրանքը, և նման միջոցառումներով նրա ջանքերը Հայոց եկեղեցու ներքին միասնությունը ամրապնդելու ուղղությամբ:

Հատկապես հետաքրքիր է հայ իրականության մեջ ունիթորական շարժման ծավալման, և Հայոց եկեղեցու նկատմամբ նրանց ոտնձգությունների վերաբերյալ հայտնած վկայությունները, և ինչպես նորընտիր կաթողիկոսի, այնպես էլ նրա շրջապատի ձեռք արած միջոցառումները այդ շարժման դեմ պայքարում: Անշուշտ, պատմագրական որոշակի արժեք ունեն նաև Թովմայի «Տեր Կիրակոս կաթողիկոսի վտարման մասին» և կաթողիկոսի ձեռնադրության մասին գրվածքները, որոնք դիտարկվում են որպես մի ամբողջություն նախորդ աշխատության հետ:

Լենկ-Թեմուրին նվիրված երկասիրության արժեքը դուրս է եկել ազգային պատմագիտության շրջաններից և ձեռք բերել միջազգային լայն հնչեղություն: Դրանով պետք է բացատրել աշխատության ռուսերեն, ֆրանսերեն, վրացերեն (մասամբ) թարգմանությունները:

Դարի նշված պատմագրական երկասիրությունները թեև նշվածներով սպառվում են, այնուհանդերձ չպետք է մոռանալ ձեռագրաց հիշատակարանների գոյության փաստը: Անշուշտ, մենք դրանց պատմագրական արժեորմանը անդրադառնալու ենք, սակայն այստեղ առանձնապես պետք է շեշտել, որ առանց հիշատակարանների տվյալների օգտագործման, նման պայմաններում անհնարին է XIV-XV դարերի Հայոց պատմության ընդհանուր պատկերը ներկայացնելը: Բարեբախտություն է, որ XIV-XV դարերի հիշատակարանները հիմնականում դասակարգված են և հրատարակված երջանկահիշատակ Լևոն Խաչիկյանի կողմից:

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XVI ԴԱՐՈՒՄ

Հայությունը ոտք դրեց XVI դար դարձյալ քոչվոր ցեղերի ավերիչ ասպատակությունների, արհավիրքների, սովի, գաղթի և աղետավոր այլ իրողությունների պայմաններում: Դարը թեև չունեցավ մասնագիտական կողմնորոշմամբ իր պատմագիրը, սակայն նշելի է, որ հայ ողբագրական ստեղծագործությունները մասամբ լրացնում են այդ բացը:

Ողբագիրներ Կարապետ Բաղիշեցին, Մինաս Թոխաթեցին, Նիկողայոս Ստամպոլցին և որ շատ կարևոր է՝ Սիմեոն Ապարանեցին, և էլի ուրիշներ, իրենց ստեղծագործություններում սեղմ-համառոտ, միևնույն ժամանակ դիպուկ գծերով նկարագրել են թուրք-պարսկական անվերջանալի պատերազմների, անհնազանդ քրդական ցեղերի չընդհատվող ասպատակությունների հետևանքով ժողովրդի թշվառ վիճակը, երկրի տնտեսական ու մշակութային խոր անկումը: Պատմագրական երկասիրությունների բացակայության պայմաններում, անշուշտ, պատմական այս ողբերը հիանալիորեն ծառայում են որպես սկզբնաղբյուրներ՝ Հայ ժողովրդի պատմության նման պատմաշրջանների իրական պատկերը ներկայացնելիս[29]:

---

[29]Հայ միջնադարյան պատմական ողբերի պատմաճանաչողական, իմացաբանական և գեղարվեստական նշանակությունը լավագույնս մեկնաբանված է Պ. Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.)» մենագրությունում, Երևան, 1969:

Որպես օրինակ մատնանշենք XVI դարի առաջին կեսի հեղինակ Կարապետ Բաղիշեցու «Ողբ ի վերայ արշավանացն շահ Իսմայելի» ստեղծագործությունը[30]: Ուրեմն, խոսքը Սեֆյան Պարսկաստանի հիմնադիր շահ Իսմայիլի (1502-1524) գահակալությամբ ակ-կոյունլու ցեղերի պարտության և դարասկզբին ծավալված թուրք-պարսկական պատերազմների մասին է: Չափազանց արժեքավոր են ողբասացի բերած վկայությունները պարսկական տարածքներից Արևմտյան Հայաստան քրդական ցեղերի ներթափանցման մասին: Սա պատմական չափազանց կարևոր մի իրողություն է, որ ձեռնարկել էր Օսմանյան կայսրությունը՝ Պարսկաստանի տիրապետության ներքո գտնվող քրդական աշիրեթներին մոլլա Իդրիսի գլխավորությամբ միավորելու և պատմական Հայաստանի հարավ–արևմտան և արևելյան երկրամասերը քրդերով բնակեցնելու ուղղությամբ: Նպատակը ակներև է: Դեռևս այն ժամանակ՝ XVI դարի սկզբներին, թուրքերը կարևոր ջանքեր են գործադրում Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թվաքանակը նվազեցնելու և այն քրդերով բնակեցնելու ուղղությամբ: Ողբում նկարագրվում է 1511-1512 թթ ձմռանը շահ Իսմայիլ I արշավանքը քրդական («զազգն Մարաց») անջատողականության կենտրոնատեղի Բաղեշի վրա և այդ ընթացքում հայ ժողովրդի ապրած աղետներն ու գերեվարությունը:

---

[30] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 338-343՝ Ներսես վրդ. Ակինյանի աշխատասիությամբ:

Պատմագրական անուրանալի արժեք ունի և որոշակի հետաքրքրություն է նորկայացնում նաև Անհայտ տաղասացի «Ողբ ի վերայ մանկանց, որ գերի տարան ի քաղաքն Ստամպօլ» ստեղծագործությունը, որը նվիրված է Օսմանյան կայսրության տարածքում լայն ծավալ ընդունած քրիստոնյաներից բռնությամբ կատարվող մանկահավաքներից («դևշիրմե») մեկի կոնկրետ դրսևորման իրողությանը[31]: Այս ողբը պատմական հավաստի, վավերական տեղեկություններ է պարունակում Սուլեյման I սուլթանի 1531 թ-ի հատուկ հրամանով կազմակերպված մանկահավաքի մասին, որ բացակայում է հետագա հեղինակների գրվածքներում: Ներկայացվող նյութի առումով նորություն է և չափազանց հետաքրքրական XVI դարի առաջին կեսի ողբասաց Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» ստեղծագործությունը[32]:

Մինասը թեև ծնվել է Թոխաթ (Եվդոկիա) քաղաքում, սակայն դեռևս երիտասարդական տարիներին պանդուխտ է դարձել և հաստատվել Լեհաստանի Կամենեց, ապա Լվով քաղաքներում: Նրա հեղինակած երկը ներկայացնում է Օլախաց երկրի (Վալախիա) հայերի առօրյան, նրանց հասարակական-քաղաքական կացությունը: Ինչպես տեսնում

---

[31] Ողբը հրատարակել է Ներսես վրդ. Ակինյանը, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 592-595:

[32] Տե՛ս Ներսես վրդ. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 85-102:

ենք, ներկայացված նյութը նորություն է պատմաշրջանի պատմագրության համար: Հեղինակին հուզել է հայրենիքից հեռու ապրող հայության կյանքը և նա այն դարձրել է հատուկ ստեղծագործության նյութ: Խոսքը վերաբերում է Մոլդավիայի թագավոր Շտեֆան Ռարեշի տեղի հայերին բռնությամբ դավանափոխ անելու 1551 թ-ի հրովարտակի հետևանքով ստեղծված իրադրությանը: Այստեղ շեշտվում է հայրենի դավանանքին հավատարիմ մնալու հայերի հավատամքը և դրա հետևանքով նրանց կրած հալածանքներն ու ֆիզիկական ոչնչացումը: Որպես ժամանակակից ու ականատես («զայս դառն աղետս աչաւք տեսի») հեղինակի ստեղծագործությունն անկասկած հավաստի է և իրենից պատմագիտական մեծ հետաքրքրություն և արժեք է ներկայացնում:

Պատմագրական անուրանալի արժեքներով են օժտված նաև Թադևոս վարդապետ Սեբաստացուն վերագրվող «Տաղ վասն Կարմիր գլխոյն, որ եկեալ այրեաց եւ աւրերեաց զՀայոց աշխարհս մինչեւ Եզընկան» ողբը [33], և մանավանդ Հովհաննես Մակվեցու «Ողբ Հայաստանեաց աշխարհի յԵրևանայ և Ջուղայու» ստեղծագործությունը: Այստեղ հեղինակը պատմական նյութը ներկայացրել է գեղարվեստական տարրերով, սակայն երբեք չանտեսելով հիմնականը՝ 1603-1605 թթ. ընթացքում կատարված պատմական կոնկրետ

---

[33] Հրատարակել է Հ. Քյուրտյանը, տե՛ս «Հայաստանեաց եկեղեցի», ամսագիր, Նյու Յորք, 1943, էջ 411-413:

իրողությունները, Երևանի և «զպարծանքն Հայոց ազգիս» Ջուղայի ավերումը, հայ բնակչության բռնագաղթը: Չափազանց կարևոր է, որ այդ բոլորը ներկայացված է ականատեսի կողմից.

Ես Յովհաննէս Մակուեցի,
Լալագին տաղիս երգողի,
Ես էի իմ մէջ նոցայ եւ
Աչօք իմովք զայս տեսի[34] :

XVI դարի հայ պատմագիտական մտքի մի յուրօրինակ արտահայտություն է Սիմեոն Ապարանեցու «Վիպասանութիւն» պատմական ողբը[35]:

Սիմեոնը ծնվել է Մոկքի Մամրտեք գավառի Ապարանք գյուղում, XV դարի կեսերին: Սովորել է Մեծոփա վանքում, ապա՝ ձեռնադրվել վարդապետ, որից հետո զբաղվել քարոզչական գործունեությամբ մինչև իր մահը (1615 թ.): Նա ունեցել է բազմաթիվ աշակերտներ, ինչպես օրինակ Կարապետ Մոկացին, Կիրակոս Այրարատեցին և ուրիշներ: Նրանից մեզ է հասել «Պատմութիւն Ապարանից Ս. Նշանին», «Վիպասանութիւն», «Ողբանք ի վերայ թախթին Տրդատայ

---

[34] Տե՛ս Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 279 :

[35] Սիմեոն Ապարանեցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870: Քննական բնագիրը տե՛ս՝ Սիմեոն Ապարանեցի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Կարապետ Սուքիասյանի, Երևան, 1976, էջ 79-173:

թագաւորին», «Ի վերայ առման Թավրիզոյ» և «Ուսումնատենչ համակ անձին» գրվածը[36]:

«Վիպասանություն» պատմական ողբի ստեղծագործական ճակատագիրը չափազանց հետաքրքիր է: Ստեղծագործության պատվիրատուներն են եղել նրա աշակերտներ Կիրակոս Այրարատեցին և Անանիա Նախավկայեցին: Նրանք 1590 թ-ին դիմում են իրենց ուսուցչին, որպեսզի նա չափածոյի վերածի Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց» երկասիրությունը : Ապարանեցին համաձայնվում է, և օգտվելով նաև Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդ Երեցի և այլոց պատմություններից, չափածո շարադրում է իր երկասիրությունը, որը օժտվում է երկարաշունչ մի խորագրով՝ «Շարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեացն սեռի ի սկզբանէ մինչեւ ցվախճան որդի զհարսն փոխանորդելով, ասացեալ բանիւ բարառնական նուսխայօրէն պիտակ անուն Սիմէոն վարդապետի Ապարանեցոյ ի վիպասանութենէն Ղազարու Փարպեցոյն: Օգնեա Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ: Ի խնդրոյ երկուց աշակերտաց Կիրակոսի Այրարատեցոյ եւ Անանիայի Նախավկայեցոյ»: Ինչպես նշվեց, վիպասանության համար հիմք են ծառայել այն հայ պատմագիրները, որոնք իրենց ստեղծագործություններում շեշտել են հայոց պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ: Ապարանե-

---

[36] Տե՛ս Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 138:

ցին իր այս ստեղծագործությունով նախնիների հերոսական կերպարով նպատակ էր հետապնդում անցյալի հերոսական ու հայրենասիրական դրվագներով, հերոսներով դաստիարակել իր ժամանակակիցներին : Այս ընդհանուր հենքի վրա հեղինակը աշխատում է Մամիկոնյան և Պահլավունի տոհմերի, նրանց ներկայացուցիչների քաջությունը, ազգասիրությունը ցուցահանելու և դրանք օրինակ դարձնելու:

Վիպասանության առաջին մասում առավել շեշտված կերպով է անդրադառնում Սմբատ Բագրատունուն. նա բոլորից քաջ է, անպարտելի է, նա հայրենասերի իսկական կերպար է: Հեղինակը նրան անգամ համեմատում է հունական դիցաբանության Աքիլլեսի հետ («զնորն Աքիլլես զՀռոտացին, զերկրորդ Հերակլն անյաղթելին[37]»): Չափազանց պատմական երանգներով է ներկայացնում V դարի վերջերի Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսիկների պարտության հանգամանքները: Վիպասանությունն ունի նաև չափազանց կարևոր աղբյուրագիտական նշանակություն: Երբ մենք ուշադրությամբ վերլուծում ենք, քննում այս ստեղծագործության աղբյուրները, ապա պարզվում է, որ նա օգտվել է իր օրերում շրջանառության մեջ գտնվող Փարպեցու, Խորենացու և Սեբեոսի երկերի այնպիսի օրինակներից, ակնհայտորեն մեզ չհասած այնպիսի բնագրերից,

---

[37] Սիմեոն Ապարանեցի, նշվ. աշխ. , էջ 139:

որոնք այսօր կարող են օգտակար լինել այդ հին բնագրերի վերականգնման համար[38]:

Սիմեոն Ապարանեցու բոլոր երկասիրությունները լի են հույսի և լուսավոր ապագայի նկատմամբ հավատով: Նա իր ընթերցողներին կոչ է անում՝

Չէ պարտ կըտրել զթելն հուսոյ...

Նա հավատացած է, որ այդ պատմաշրջանում ժողովրդի մեջ արծարծված թուրք – պարսկական բռնակալություններից ազատագրվելու գաղափարն իրականանալի է: Դրա համար անհրաժեշտ է լինել միասնական, լինել միակամ՝ ինչպես Մամիկոնյանց և Պահլավունյաց հերոսների հետևողությամբ, նրանց օրինակով դաստիարակված երիտասարդությունն է, որ կարող է հասնել երկրի ազատագրությանը :

Որպես օրինակ նա կոչ է անում հետևելու V դարի Վարդանանց և Վահանանց հերոսների օրինակին, դատապարտում է Վասակ Սյունեցուն և դարձյալ կոչ է անում մերժել հայոց ուխտին «ստեալ» Վասակին:

---

[38] Այս առումով չափազանց կարևոր ուսումնասիրություն է կատարել Գևորգ Աբգարյանը, տե՛ս «Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը» մենագրությունը (Երևան, 1965), հմմտ. Սեբեոսի պատմության քննական բնագրի Գ. Աբգարյանի հրատարակության ծանոթագրությունների բաժինը (Երևան, 1979): Տե՛ս նաև Կ. Սուքիասյան, Սիմեոն Ապարանեցու վիպասանության աղբյուրները, «Լրաբեր» ՀԽՍՀ ԳԱ (հասարակական գիտություններ), 1970, N 8, էջ 30-38:

Նա հրավեր է ուղղում Հայաստանից դուրս սփռված հայությանը հետ վերադառնալ Հայաստան և դառնալ իր տան տերը:

XVI դարի պատմագրական երկասիրությունների մեջ պետք է առանձնացնել ուղեգրությունները:

Ուղեգրությունը պատմագիտական գրականության մի ուրույն ժանր է: Ճիշտ է, այդ ժանրի առաջին դրսևորումներն արդեն առկա էին V-XII դդ. հայ պատմագիտական երկերում, սակայն այն ինքնուրույն առանձին ժանր է դառնում արդեն XV դարի վերջերին նշանավոր ճանապարհորդ Մարտիրոս Երզնկացու շնորհիվ: Հետագայում, արդեն XVI-XVIII դարերում այն ավելի է զարգանում և չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում ինչպես հայ, այնպես էլ օտար երկրների պատմության ուսումնասիրության համար[39]:

Ուսումնասիրողների կարծիքով հայկական ուղեգրական գրականությունը լավագույններից մեկն է բովանդակ պատմագրության մեջ:

Հայ ուղեգրական գրականության արժեքավոր երկասիրություններից է Մարտիրոս Երզնկացու Ուղեգրությունը:

---

[39] Հայկական ուղեգրական գրականության ժանրային բնութագիրը մանրամասն տե՛ս Ա. Գ. Սարյանի «ԺԷ դարի հայկական ուղեգրությունները» մենագրությունում (Երևան, 2000): Իսկ ընդհանրապես XV-XVIII դդ. Հայկական ուղեգրությունները 2 հատորով, աշխարհաբար թարգմանությամբ հրատարակել է Ա. Մադոյանը, տե՛ս «ԺԷ-ԺԸ դարերի ուղեգրություններ» (Երևան, 2005): Առկա են նաև աշխարհաբար այլ հրատարակություններ (տե՛ս «Արաքս» ամսագիր, 1995, N 1, էջ 30-37, «Էջմիածին», ամսագիր, 1998, N 5, էջ 89-96) և այլն :

Ուղեգրության մեծ նշանակության շնորհիվ է, որ այն թարգմանվել է բազմաթիվ լեզուներով (ֆրանսերեն, պորտուգալերեն, իսպաներեն, ռուսերեն)։ Առկա է նաև այս ուղեգրության աշխարհաբար թարգմանությունը [40]։

Մարտիրոս Երզնկացու կենսագրության մասին մեր տվյալները շատ քիչ են, բացառությամբ այն դեպքերի, երբ նա Ուղեգրության մեջ առանձին ոչ նպատակադրված փաստեր է հայտնում իր վերաբերյալ։ Հայտնի է, որ նա ծնվել է XV դարի կեսերին, ունի հոգևոր աստիճան (եպիսկոպոս) և եղել է Երզնկայի Սուրբ Կիրակոս վանքի միաբան, որտեղ էլ ժամանակին ստացել է իր կրթությունը։ Այնուհետև, ըստ Ղևոնդ Ալիշանի, սպասավորել է Երուսաղեմում՝ Սուրբ գերեզմանը [41]։ Այնուհետև ցանկացել է տեսնել Սուրբ Հակոբի գերեզմանը, որը գտնվում էր Իսպանիայում։ 1489 թ-ի հոկտեմբերի 29-ին նա Երզնկայից սկսում է իր ճանապարհորդությունը դեպի Իսպանիա։ Այդ ճանապարհորդության ընթացքում նա կտրել-անցել է 15 հազար կմ, այցելել է Կ. Պոլիս, Իտալիա, Շվեցարիա, Գերմանիա, Ֆլանդրիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա։ Իր այդ ցանկությունների մասին նա շեշտել է հենց իր երկասիրության

---

[40] Տե՛ս Մարտիրոս Երզնկացի, Այս է պատմությունը Ֆռանգների երկրի, որ տեսել է Երզնկացի Մարտիրոս եպիսկոպոսը և գրել քաղաքների մասին, որոնք տեսա իմ աչքով և այսպես եղավ, « ԺԵ-ԺԸ դարերի ուղեգրություններ», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մադոյանի, Երևան, 2005, էջ 31, 39։

[41] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 194։

առաջին իսկ տողերում: Իսպանիա այցելությունից և որոշ ժամանակ Սուրբ Հակոբի գերեզմանին սպասարկելուց հետո նա հետ է վերադառնում, սակայն վերադարձի ճանապարհը «համատարած անծայրածիր ծովով է կատարել», որը տևել է 68 օր: Ենթադրելի է, որ նա նավարկել է Ատլանտյան օվկիանոսով, սակայն փոթորիկները, ալեբախությունը ընդհատել են նավարկությունը և նավը հետ է վերադարձել Իսպանիա: Մարտիրոս Երզնկացին ափ է իջել Անդալուզիայում:

Շատ ուսումնասիրողներ, այդ թվում նաև օտար, ենթադրում են, ոչ առանց հիմքի, որ Մարտիրոս Երզնկացու նավարկած նավը Քրիստափոր Կոլումբոսի երկրորդ արշավախմբի նավերից մեկն է եղել , որ Կուբայի ափամերձ շրջանում ենթարկվելով ալեբախության, հետ է վերադարձել Եվրոպա: Դժվար է այս տեսակետի վերաբերյալ թեր կամ կողմ որևէ փաստ առաջարկել, սակայն անկասկած իրողություն է, որ Մարտիրոս Երզնկացին 68 օրյա ծովային ճանապարհորդություն է կատարել: Արդեն Իսպանիա հասնելուց հետո, Սևիլիայում նա այցելել է այլ սրբավայրեր, անգամ տեսակցել Իսպանիայի նշանավոր թագուհի Իզաբելլայի հետ և ցամաքային ճանապարհով հետ վերադարձել:

1496 թ-ի փետրվարի 20-ին նա հասել է Հռոմ և ավարտելով իր ճանապարհորդությունը՝ հետ վերադարձել Երզնկա: Ամբողջ ճանապարհորդությունը տևել է 7 տարի:

Ճանապարհորդության վերաբերյալ նա թողել է մանրամասն նկարագրություն: Չափազանց հետաքրքիր է այն փաստը, որ նա իր Ուղեգրությունն անվանում է պատմություն՝ «Այս է պատմութիւն Ֆրռանգաց երկրին, զոր տեսեալ է Երզընկացի Մարտիրոս Եպիսկոպոսն»[42]: Ինչպես ցույց է տալիս երկասիրության բովանդակությունը, Երզնկացին անկասկած գրառումներ է կատարել իր ճանապարհորդության ընթացքում, և արդեն հետագայում է, որ այդ գրառումների հիման վրա շարադրում է իր գրվածքը: Մարտիրոս Երզնկացու Ուղեգրությունը չափազանց արժեքավոր տեղեկություններ է պարունակում Արևմտյան Եվրոպայի երկրների ներքին կյանքի, մասնավորապես կրոնական, եկեղեցական կյանքի վերաբերյալ: Այս իմաստով այն նաև յուրօրինակ սկզբնաղբյուր է միջնադարյան Եվրոպայի երկրների պատմության առանձին հարցերի վերաբերյալ: Անկասկած, նրա տեղեկությունները Իսպանիայի, Իտալիայի սրբավայրերի մասին ուղեկցվում են նաև քաղաքների և վանքերի նկարագրությամբ և երբեմն նաև ժողովրդի կենցաղի, սովորությունների մասին տեղեկություններով: Կար-

---

[42] Առ այսօր հայտնի է Մարտիրոս Երզնկացու Ուղեգրության երեք ձեռագրեր՝ 1. Փարիզի Ազգային գրադարանում (ձեռագիր N 65), 2: Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում (ձեռագիր N 232, էջ 221ա - 224բ), 3. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռագիր N 3488, էջ 170բ -180ա):
Այս Ուղեգրության բնագիրը լույս է տեսել երկու անգամ՝ Բազմավեպ 1937, N 2-5, էջ 49-60 և ՀԽՍՀ ԳԱ Ակադեմիայի հասարակական գիտությունների Տեղեկագրում, 1957, N 6, էջ 97-110:

նոր են նաև նրա հաղորդած տեղեկություններն իր այցելած երկրների տնտեսական կացության վերաբերյալ: Հետաքրքրությունից դուրս չի նաև իր այցելած երկրների կենդանական և բուսական աշխարհի նկարագրությունը:

Ուղեգրությունը գրված է պարզ ու մատչելի լեզվով: Նրա խոսքը սահուն է և գրվածքն ընթերցվում է հետաքրքրությամբ:

Մարտիրոս Երզնկացու Ուղեգրությանը առաջին անգամ ուշադրություն է դարձրել Սեն Մարտենը և թարգմանել ֆրանսերեն : Այնուհետև կատարվել է այլալեզու թարգմանություններ ևս[43]:

Մարտիրոս Երզնկացու ուղևորությունից գրեթե 100 տարի անց նույն երթուղիով ճանապարհորդություն է կատարել Սարգիս աբեղա Երզնկացին: Սարգիս աբեղայի վերաբերյալ կենսագրական տվյալներ չունենք, միայն հայտնի է, որ ծնվել է XVI դարի կեսերին Բարձր Հայքի Երզնկա քաղաքում (հնարավոր է նաև գավառի որևէ գյուղում), դարձել է հոգևորական և պաշտոնավարել Երզնկայի Սուրբ Կիրակոսի վանքում: Շատ հստակ է, որ Սարգիս Աբեղան հենց այս վանքի ձեռագրատանն է ծանոթացել Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացու Ուղեգրությանը և ընթերցանության տպավորության ներքո որոշել է ճիշտ նույնությամբ կրկնել Մարտիրոս Երզնկացու երթուղին: 1587 թ-ին նա դուրս է

---

[43] Ֆրանսերեն՝ Փարիզ, 1826, պորտուգալերեն՝ Լիսաբոն, 1901, իսպաներեն՝ Երևան, 1995:

գալիս Երզնկայից և հասնում Իսպանիա : Այնուհետև հետ է վերադառնում Երզնկա 1592 թ-ին՝ ավարտելով իր ճանապարհորդությունը : Եթե Երզնկացին ընդարձակորեն էր շարադրում իր այցելած վայրերը, ապա Սարգիս Աբեղան խիստ համառոտում է, խուսափում է մանրամասներից:

Ցավալի է, որ Ուղեգրությունը մեզ է հասել ոչ ամբողջությամբ: Թերի են Ուղեգրության սկիզբը, մեջտեղի հատվածները, որոնց ներկայությունը, անշուշտ, կարող էին լրացուցիչ տեղեկությունների հիմք հանդիսանալ Սարգիս աբեղայի Ուղեգրությունը արժևորելիս: Հետաքրքիր է նաև այն, որ նա առանձին տեղեկություններ է հայտնում դարաշրջանի նշանավոր իրադարձությունների ու դեպքերի մասին՝ օրինակ Անպարտելի Արմադա նավատորմիղի կործանման, Ամերիկյան մայրցամաքի՝ «Նոր Հունդուստան»-ի հայտնագործման վերաբերյալ և այլն: Սարգիս աբեղան այցելել է Իտալիա, Ավստրիա, Գերմանիա, Ֆլանդրիա, Անգլիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Լեհաստան, Ռումինիա, Մոլդովա, Բուլղարիա: Իր ճանապարհորդության վերաբերյալ նա հակիրճ տեղեկություն է տալիս՝ «տեսել եմ Ռ (1000) բերթ ու քաղաք, թող զգեղերանքն, ԴՌ (4000) հանդիսի եկեղեցի, ԳՌ (3000) վանք, ԸՌ (8000) կուսանոնց վանք»[44]:

---

[44] «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 144:

Սարգիս աբեղայի Ուղեգրությունը նույնպես արժեքավոր է և խիստ հետաքրքրական իր ժամանակի հայ ընթերցողների համար՝ հեռավոր երկրների մասին տեղեկություններ ստանալու տեսակետից:

Ուղեգրության ընթերցումը վկայում է հեղինակի մտավոր բարձր կարողությունների մասին: Ակներև է, որ նա լավ գիտի Աստվածաշունչը, հայկական բանահյուսությունը, ինչպես նաև աշխարհագրությունը: Ուղեգրությունների բնագիրը հայտնաբերել և հրատարակել է նշանավոր պատմաբան Լևոն Խաչիկյանը[45]:

---

[45] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 125-148, տե՛ս նաև սույնի վերատպությունը՝ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հատոր Ա, Երևան 1995, էջ 291-317, տե՛ս նաև աշխարհաբար թարգմանությունը, որ իրականացրել է Ա. Մաղոյանը՝ «Արաքս», 1996, N 1, էջ 33-39: Տե՛ս նաև Վարդան Մաթևոսյանի իսպաներեն թարգմանությունը՝ «Արաքս», 1997, N 2, էջ 40-47:

XVII ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII դարի հայ պատմագրական երկասիրությունների քննությունը անհրաժեշտ համարեցինք սկսել նախորդ գլխում ավարտված ուղեգրություններից:

XVII դարի առաջին նշանավոր ուղեգիրը Օգոստինոս Բաջենցն է: Օգոստինոսի վերաբերյալ մենք ունենք հավաստի կենսագրական տվյալներ, որ հայտնում է հենց ինքը, իր Ուղեգրության մեջ : Նա ծնվել է 1590 թ-ին, Երնջակ գավառի Ապարներ գյուղում: Ժամանակին ծնողները, երբ Օգոստինոսը ընդամենը ութ տարեկան էր, նրան նվիրել են հայրենի գյուղի Ամենայն սրբոց եկեղեցուն: Հենց այս եկեղեցում էլ ստացել է իր կրթությունը՝ Մատթեոս քահանայի մոտ: Այնուհետև հոգևոր ծառայության է անցել նույն այդ եկեղեցում: 15 տարեկան էր, երբ 1604 թվականին շատ շատերի հետ ենթարկվեց շահ Աբաս Մեծի կազմակերպած բռնագաղթին: Այդ արհավիրքից հրաշքով փրկված պատանին որոշում է ճանապարհորդել դեպի Եվրոպա: Իր ճանապարհորդության շարժառիթների մասին նա գրում է. «Ես՝ մեղաւորս, այնժամ երիտասարդ էի» տեսայ, որ հայր, մայր չունէի, աշխարհս զմէկ էմ խառնուած, վախեցայ անօրինած կողմանէն, թէ զիս չգողանէին, տանէին, միտք արի վասն

Ֆռանկըստան գնալոյ»[46]: 1609 թ-ին նա Սպահանից դուրս է գալիս և սկսում իր ճանապարհորդությունը: Լինում է Ռուսաստանում, այնուհետև Լեհաստանում, Գերմանիայում, հետո նավարկում է Հյուսիսային Սառուցյալ և Ատլանտյան օվկիանոսներով դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ: Չափազանց մանրամասն է ներկայացնում իր իտալական ճանապարհորդությունը՝ եղել է Հռոմում, ծանոթացել տեղի սրբավայրերին:

1614 թ-ին ձեռնադրվելով քահանա՝ Օգոստինոսը վերադառնում է հայրենիք: Նրա ամբողջ ճանապարհորդությունը տևել է 5 տարի: Այնուհետև նա ևս երկու անգամ՝ 1617-1618 թթ. և 1628 -1630 թթ. դարձյալ ճանապարհորդել է եվրոպայում: Երկրորդ ճանապարհորդությունից հետո նա ներկայացել է շահ Աբաս Մեծին և նրան ներկայացրել «զԹուղթս պապին, զթագաւորաց Փռանգաց և Սպանիոյ»: Այս հանգամանքը մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ Բաջենցը սոսկ քահանա չէր, այլ կատարում էր նաև դիվանագիտական պատասխանատու հանձնարարություններ: Ենթադրելի է, որ տվյալ դեպքում խոսքը Պարսկաստանին հակաթուրքական լիգայի մեջ ընդգրկելու շուրջ տարվող բանակցությունների մասին էր: Հետագայում Վատիկանի կողմից նրան շնորհվել է եպիսկոպոսական աստիճան և նա նշա-

---

[46] Տե՛ս Ք. Պատկանյան, Նշխարք մատենագրության Հայոց, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 9:

նակվել է Նախիջևանի կաթոլիկ հոգևոր թեմի առաջնորդ[47]: Օգոստինոս Բաջենցը իր բազմաթիվ ճանապարհորդությունները ամփոփել է «Ճանապարհորդութիւն եվրոպա» աշխատության մեջ[48]:

Բաջենցի Ուղեգրությունը չափազանց արժեքավոր տեղեկություններ է պարունակում 1604 թ-ի ազգային սարսափելի արհավիրքի՝ շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի վերաբերյալ: Նրա վկայությունները երբեմն շատ ավելի մանրամասն և հավաստի են , քան անգամ Առաքել Դավրիժեցունը:

Օգոստինոսը կարևոր տեղեկություններ է հայտնում եվրոպական երկրների նիստ ու կացի, մինչև անգամ՝ ազգագրության վերաբերյալ: Ի տարբերություն այլ ուղեգիրների՝ նա համարյա չի անդրադառնում իր այցելած երկրների հայկական համայնքների պատմությանը : Նա անտարբեր է հայկական դպրոցի, եկեղեցու, կազմակերպությունների

---

[47] Օգոստինոս Բաջենցի գործունեության վերաբերյալ մանրամասն տե՛ս Սահակ վարդապետ Ճեմճեմյանի «Ֆրա Օգոստինոս եպիսկոպոս Բաջենցու գործունեությունը» հոդվածում , «Բազմավեպ», 1990, N 3-4, էջ 330-344: 1991, N 1-2, էջ 64-76:

[48] «Աւգոստինոս Բաջենցւոյ ճանապարհորդութիւնն յԵւրոպա», տե՛ս «Նշխարք մատենագրութեան հայոց», կազմեց Քերոբվե Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5-26: Տե՛ս նաև այլ հրատարակություն, որ իրականացրել է Կ. Պասմաճյանը՝ «Բանասեր», գիրք Գ, Փարիզ, 1899, էջ 222-297: Տե՛ս նաև բնագրի ֆրանսերեն թարգմանությունը, որն իրականացրել է Մարի Բրոսսեն, Փարիզ, 1837: Աշխարհաբար թարգմանությունն իրականացրել է Արշակ Մաղոյանը՝ «Արաքս», ամսագիր, 1996, N 2, էջ 63-79:

հանդեպ: Չափազանց դյուրահավատ է՝ վստահում է լսած հրաշքներին, երբեմն պարզամտության աստիճանի դատողություններ է անում: Նրա հայտնած տեղեկությունների մեջ արժեքավոր են այն հատվածները, որ վերաբերում են կաթոլիկ միսիոներների գործունեությանը Հայաստանում: Դատապարտում է միսիոներների հոգեորսությունը հայերի շրջանում: Դժգոհում է նրանց բռնի, անտակտ, կոպիտ վերաբերմունքից դեպի հայ պատանիները: Հատկապես Օգոստինոսը լայն պայքար է մղել Արևելքում կաթոլիկ միսիոներների առաջնորդ Պողոս Պիրոմալիի դեմ : Եվ պատահական չէ, որ իր հերթին Պիրոմալին Վատիկանին ուղված իր գրություններում փորձում է վարկաբեկել Օգոստինոսին և նրան պաշտոնանկ անել : Նրա երկասիրությունը հիանալի և եզակի սկզբնաղբյուր է Հայաստանում կաթոլիկական միսիոներների գործունեության և նրանց անթույլատրելի արարքների մասին:

Ժանրի ուշագրավ երկասիրություններից է նաև հայ ազատագրական շարժման գործիչ Հովհաննես Թութունջի (Արևելցի) եպիսկոպոսի Ուղեգրությունը: Թութունջին բուռն խառնվածքի տեր, ըստ էության արկածախնդիր մի անհատականություն էր, և դրանով նա բավականին հետաքրքիր տեղ է գրավում հայոց եկեղեցու պատմության մեջ: Ըստ ուսումնասիրողների Թութունջի է կոչվել մոլեռանդ ծխող լինելու համար: Կոչվել է նաև վանեցի, որոհետև ծնվել է Վանում, և Աղթամարեցի, քանզի եղել է Աղթամարի կաթո-

ղիկոս: Եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարք (1663-1664, 1665-1672 թթ.), Աղթամարի կաթողիկոս (1670-1672 թթ.), ինչպես նաև հայկական մի քանի եկեղեցական թեմերի հոգևոր առաջնորդ : 1678-1680 թթ-ին եղել է Եթովպիայում, փորձել ապահովել վերջինիս մասնակցությունը հակաթուրքական կոալիցիային[49]: Իր ճանապարհորդության մանրամասները նա շարադրել է մի առանձին Ուղեգրությունում[50]:

Թութունջիի Ուղեգրությունը չափազանց կարևոր է հայ ազատագրական շարժման պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Ինչու չէ, առանձնակի արժեք է նաև Հաբեշստանի՝ որպես երկրի, նկարագրությունը: Շատ մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում պատմական արժեք ունեցող այնպիսի հատվածներ, ինչպիսին է Եթովպիայի նկարագրությունը՝ այդ երկրի պետական կառուցվածքի, թագավորի, նրա մերձավոր շրջապատի, արքունական սարքողությունների, ինչպես նաև երկրի մայրաքաղաքի վերա-

---

[49] Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 301-311:

[50] Հայտնի են Հովհաննես Թութունջի եպիսկոպոսի ուղեգրության երկու օրինակ՝ «Պատմութիւն երկրին Հապաշստանա, զոր գնաց ոմն ի վարդապետաց եւ գրել զպատմութիւն Հապաշստանայ եթող աշխարհի», Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 737, էջ 201 ա, 202 բ: Այս ձեռագրի հիման վրա է կատարվել բնագրի հրատարակությունները՝ տե՛ս Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 301, 306: Ժամանակին երկրորդ ձեռագրի հիման վրա բնագիրը հրատարակել է Արշակ Ալպոյաճյանը, տե՛ս «Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը Հապաշստան ԺԷ դարում», Կահիրե, 1946:

բերյալ տեղեկությունները: Անշուշտ, այս առումներով, հայ ուղեգրողի աշխատությունը ձեռք է բերել միջազգային կարևորություն:

Ինչպես ցույց են տալիս համեմատությունները, եվրոպական համապատասխան գրականությունից բերված տվյալները, Հովհաննես Թութունջու հաղորդած տեղեկությունները հավաստի են, նա ստուգապատում գրող է: Ահա թե ինչու այն նաև մեծ հետաքրքրություն է առաջացրել Եթովպիայի պատմությամբ զբաղվողների համար:

Նույն ժամանակաշրջանի հայ նշանավոր ճանապարհորդներից է հայ ազատագրական շարժման ամենանշանավոր դեմքերից Շահմուրատ Բաղիշեցին: Կենսագրության վերաբերյալ միայն գիտենք, որ ծննդավայրը Բաղեշ քաղաքն է, եղել է առևտրական, որի մասին է վկայում նրա խոջա պատվատիտղոսը: Հայտնի է նաև, որ Հովհաննես Թութունջիի կողմից դեպի Փարիզ կազմակերպված այցելության ժամանակ մասնակցել է այդ պատվիրակությանը, եղել ֆրանսիական թագավորի կողմից ընդունելության արժանացած պատվիրակության կազմում: 1666-1683 թթ. գործել է Փարիզում: Նա մի քանի անգամ ընդունվել է Լյուդովիկոս XIV կողմից: Հայտնի է նաև, որ նա թողել է հիշատակարան, որտեղ նկարագրել է Վերսալի արքայական պալատը: Ի վերջո հայտնի է նաև, որ նա մահացել է 1684 թվականին:

Շահմուրատ Բաղիշեցին հեղինակել է մի հիշատակարան, որ վերաբերում է նրա, ինչպես ճանապարհորդության,

այնպես էլ Ֆրանսիայի մայրաքաղաքից տպավորություններին, մասնավորապես թագավորական պալատից: Ճիշտ է, հեղինակը իր գրվածքը անվանում է հիշատակարան, սակայն ըստ էության, այն պատկանում է Ուղեգրությունների տեսակին: Ինքը՝ հեղինակը, իր աշխատությունը անվանում է «Պատմութիւն Վերսալիայ քաղաքին Ֆրանկաց»[51]: Շահմուրատ Բաղիշեցու Ուղեգրությունը, անշուշտ, կարևոր լինելով նկարագրական առումով, այնուհանդերձ առավել կարևորվում է հայ-ֆրանսիական բանակցությունների վերաբերյալ Հայաստանի ազատագրության շուրջ ֆրանսիական արքունիքի հետ վարած բանակցությունների մասին տեղեկություններով: Այս առումով Բաղիշեցու աշխատությունը մանրամասն քննության է ենթարկվել Հ. Անասյանի կողմից:

Հայ ուղեգրական գրականության լավագույն երկասիրությունը հեղինակել է Սիմեոն Լեհացին (Սիմեոն Զամոսցացի): Ծնվել է 1584 թ. Լեհաստանի Զամոստիե քաղաքում: Սովորել է ծննդավայրի վարժարանում, աշակերտել տաղերգու Հակոբ Թոխաթեցուն: Կ. Պոլսում աշակերտել է Գրի-

---

[51] Բնագիրը տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր N 4618, էջ 116 ա, 175 ա: Առաջին անգամ հրատարակել է Գ. Պատկանյանը, տե՛ս «Արարատ» ամսագիր, Թիֆլիս, 1850, հոկտեմբեր, էջ 99-101: Կան նաև բնագրի այլ հրատարակություններ, որոնցից պետք է նշել Հ. Անասյանի հրատարակությունը, տե՛ս Անասյան, նշվ. աշխ., էջ 315-319: Հովսեփ Օրբելու կողմից թարգմանվել է նաև ռուսերեն՝ И.А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 532-538:

գոր պատրիարք Կեսարացուն, այլուր՝ Մովսես Տաթևացուն և Ազարիա Սասնեցուն: Զբաղվել է գրչությամբ, մանկավարժությամբ, տարիներ շարունակ պաշտոնավարել է Լվովի հայկական դպրոցում: 24 տարեկան հասակում սկսել է իր ճանապարհորդությունները, որոնք շարունակվել են մինչև 1619 թ.: 12 տարվա ընթացքում նա շրջագայել է Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի շատ երկրներում:

Թարմ տպավորությունների ներքո՝ հենց ճանապարհորդությունների ընթացքում, ինչպես ինքն է գրում՝ «երբեմն ի վերայ գրաստի, երբեմն իջեւանս եւ խաներն նստեալ» սկսել է շարադրել «Ուղեգրություն» երկասիրությունը, որը հիմնականում ավարտել է 1619-1625 թթ. ընթացքում[52]: Այստեղ հեղինակը պարզ, հասկանալի լեզվով ճշգրիտ տեղեկություններ է հաղորդում իր այցելած երկրների բնակչության էթնիկ կազմի, սովորությունների, կենցաղի, տնտեսական կյանքի, ճարտարապետական հուշարձանների և հարակից այլ հարցերի մասին: Զուգընթաց գրի է առել տարբեր ժողովուրդների ավանդույթները, բանահյուսական զրույցները, տեսիլքները: Զգայական ու հայրենասիրական անզուսպ պոռթկումով է նկարագրել շրջագայությունները Հայաստանում՝ Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Բալու, Մուշ, Տիգրանակերտ և այլուր:

---

[52] «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք», ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936:

Սիմեոն Լեհացու ուղեգրությունների մեծ արժեքը նախ և առաջ կայանում է նրանում, որ նա ընդարձակորեն ու մանրամասն անդրադարձել է իր այցելած վայրերի հայկական համայնքների պատմությանը: Սա մի յուրօրինակ հանրագիտարան է, գաղութահայ հանրագիտարան, որն ամփոփում է եզակի փաստեր տարբեր երկրների հայկական համայնքների մասին: Լեհացին ամենուր հայ է փնտրել և գտել նրանց ոչ միայն մեծ քաղաքներում, այլ հեռավոր գյուղերում ու անմատչելի վայրերում: «Թէ հաշուես, - սրտի խոր կսկիծով գրում է հեղինակը,- ի Պուղտանայ (Մոլդովա- Ա. Ու.)» մինչև Ստամպօլ, պութուն Ուռումէլին մինչև մեծն Վանատիկ նա չկայ քաղաք,գեղ կամ չֆթլիկ (ազարակ), որ հայ չկենայ, որ վասն ծովեցեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ ենք ի վերայ երկրի որպէ զփոշի»[53]: Որևէ բնակավայր ներկայացնելիս Լեհացին առաջնահերթ է համարում նախ խոսել հայերի մասին: Նրան հետաքրքրող հարցերի շրջանակում են գտնվել հետևյալները՝ 1. ե՞րբ են հայերը հաստատվել տվյալ բնակավայրերում և որտեղի՞ց են եկել, 2. ի՞նչ լեզվով են հաղորդակցվում, 3. ի՞նչ եկեղեցիներ, դպրոցներ ու հոգևորականներ ունեն, 4. ի՞նչ զբաղմունք և եկամուտներ ունեն, 5. ի՞նչ հարաբերությունների մեջ են տեղաբնակների հետ, 6. քանի՞ տուն, խանութ և արհեստանոց ունեն, 7. որքա՞ն է նրանց թվաքանակը: Լեհացին ցավով և տագնապով

---

[53] Անդ, էջ 8:

է գրում հայերի ուծացման, բարոյալքման ու դավանափոխության փաստերի մասին: Այդ երևույթների դեմ պայքարի հիմնական միջոցներ է համարել դպրոցն ու եկեղեցին: Հայրենասեր պատմիչը ազգային միության և սիրո կոչ է անում բոլոր հայերին, որոնց շնորհիվ հնավոր կլինի միայն ազգային պետականության վերականգնումը: «Սէրն է գլուխ օրինաց եւ պատուիրանաց,- գրում է նա, -եւ հազար երանի ազգին, որ սէր ունի»:

Սիմեոն Լեհացին հեղինակել է նաև «Տարեգրութիւն» փոքրածավալ երկասիրությունը, որը փաստորեն «Ուղեգրության» շարունակությունն է կազմում: Այստեղ ներկայացվել է 1623-1635 թթ. պատահած իրադարձությունների նկարագրությունը՝ զգալի բաժին հատկացնելով լեհահայ պատմությանը և այստեղ ծագած դավանաբանական խնդիրներին[54]:

Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը հայ պատմագիտական երկերի շարքում պատվավոր տեղ է զբաղեցնում, այն իր նշանակությամբ ու բազում արժանիքներով չի զիջում եվրոպական համանման երկասիրություններին, հանգամանք, որով կարելի է բացատրել նաև երկասիրության իտալերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն, բուլղարերեն և լեհերեն թարգմանությունները[55]:

---

[54] Անդ, էջ 356-384:

[55] Տե՛ս նաև աշխարհաբար թարգմանությունը՝ Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, աշխատասիրությամբ Ա.Գ. Մադոյանի, Երևան, 1997:

XVII դարում ստեղծագործած մեր վերջին ուղեգիրը Ավետիք Տիգրանակերտցին է: Նա ապրել է XVII դարի երկրորդ կեսին: Իր կյանքի մեծ մասն անցկացրել է թափառումների մեջ և տարիների ընթացքում իր ճանապարհորդությունների վերաբերյալ նյութեր է հավաքել ապագա շարադրանքի համար: Այստեղից մենք գիտենք, որ նա ծնվել է Տիգրանակերտում, այնուհետև մանկական և երիտասարդական տարիները անցկացրել է Էրզրումում, այստեղ էլ ստացել է իր կրթությունը: Շրջել է Հայաստանի բոլոր նշանավոր բնակավայրերով մեկ, ինչպես օրինակ Բաղեշ, Վան, Երզնկա, եղել է Պարսկաստանում, Արաբական երկրամասերում, Օսմանյան կայսրության մի քանի վիլայեթներում: Բավականին ստվար այդ օրագրությունից լույս է տեսել ընդամենը մի հատված՝ «Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ»: Ձեռագիրը գտնվում է Մխիթարյան միաբանության մատենադարանում[56]: Այս ուղեգրության մեջ հեղինակը ներկայացնում է 35 տարվա ընթացքում իր կատարված ճանապարհորդությունները, ընդ որում, խիստ համառոտ: Ուղեգրության նշանակությունը ավելի է շեշտվում այն հանգամանքով, որ հեղինակը այցելած լինելով Հաբեշստան, Լիբիա, Սուդան, Աֆրիկայի հյուսիս և հասնելով մինչև Ջիբրալթար՝ հետ է վերադարձել այնտեղից: Հաշվի առնելով այս երկասիրության ճանաչողական նշանակութ-

[56] Բազմավեպ, 1897, N 17, էջ 459-463:

յունը՝ այն շատ բարձր է գնահատվում, որով էլ բացատրվում է դրա իտալերեն կրկնակի և ռուսերեն թարգմանությունները, որը կատարել է նշանավոր հայագետ Գրիգոր Խալաթյանցը (Մոսկվա, 1898)[57]:

Ուսումնասիրողների կարծիքով (Պ. Չորանյան) այս ուղնորությունը տեղի է ունեցել 1696-1699 թթ. ընթացքում, բայց ոչ ավելի ուշ, քան 1700 թվականը: Ուղեգրությունը կարևոր սկզբնաղբյուր է XVII դարի վերջերի Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների կյանքը ուսումնասիրելու համար: Հայ ուղեգրողի վաստակը կայանում է հենց սրանում:

Նշելի է, որ բացի աշխարհագրական վկայություններից ուղեգրությունը պարունակում է նաև աֆրիկյան մի քանի ժողովուրդների ազգագրության վերաբերյալ տեղեկություններ:

Ավետիք Տիգրանակերտցու ուղեգրությամբ ավարտվում են XVII դարի ուղեգրական երկասիրությունները:

XVII դարի հայկական պատմագրական երկասիրությունների մեջ իր ուրույն տեղը ունի Հովհաննես Կամենացու աշխատությունը, որ վերաբերում է 1621 թ-ի լեհ-թուրքական պատերազմին որը տեղի է ունեցել Խոտին քաղաքի մոտ: Այս քաղաքը չափազանց կարևոր նշանակություն է ունեցել որպես ռազմագիտական կենտրոն լեհ-թուրքական

---

[57] Ավետիք Տիգրանակերտցու վերաբերյալ մանրամասն տե՛ս Պ. Չորանյան, Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին, «Լրաբե»ր, ՀԽՍՀ հասարակական գիտություններ, 1973, N 7, էջ 96-107: Տե՛ս նաև Հ. Անայան, Հայկական մատենագիտություն, հատոր Բ, Երևան, 1976, էջ 1014-1023:

պատերազմի շրջանում: Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ համարյա չկան: Ենթադրելի է, որ ծնվել է XVI դարի կեսերին: Նրա հայրը՝ Տեր Հակոբը, եղել է հոգևորական և չափազանց նշանավոր մեկն է տվյալ տարածաշրջանի հայկական գաղթավայրերում: Հովհաննես Կամենացու երկասիրությունը, որ ունի «Պատմութիւն պատերազմին Խոթինու» վերնագիրը[58], բաղկացած է առաջաբանից, 18 գլուխներից և մի քանի հիշատակարաններից: Հեղինակը մանրամասն ներկայացրել է Խոթինի իրադարձությունները, ճակատամարտի մանրամասները ու դրան հետևող իրադարձությունները: Վերջին՝ 18-րդ գլուխը նվիրված է սուլթան Օսման II- ի սպանությանը, որ տեղի է ունեցել 1622 թ-ին Կ. Պոլսում: Աշխատանքի առաջաբանում հեղինակը շեշտում է, որ երկասիրությունը գրել իրեն ստիպողաբար պատվիրել է հայրը՝ Տեր Հակոբը: Հեղինակը օգտագործել է մի քանի սկզբնաղբյուրներ, հիմնականում լեհերեն: Իրադարձությունների վերաբերյալ իր տեղեկությունները, որոնց նա ականատես է եղել, հիմնավորում է լրացուցիչ սկզբնաղբյուրներով: Արդեն նշել ենք, որ Խոտինը՝ ռազմագիտական կարևոր կենտրոն էր լեհ-թուրքական պատերազմում: Դրան պետք է ավելացնել այն, որ այս քաղաքում ու շրջակայքում զգալի թվով հայեր էին ապրում: Բնականաբար հեղինակը պետք է անդրադառնար նաև դրան: Հենց

---

[58] Տե՛ս Հովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրությամբ Հ. Անասյանի, Երևան, 1964:

սա էլ եղել է հեղինակի հիմնական շահագրգռվածությունը՝ անդրադառնալու հայկական համայնքի ներքին կյանքին, շեշտելու նրա տնտեսական բարգավաճ վիճակը, հայերի նշանակությունը տարածաշրջանի տնտեսական կյանքում: Այս պատմագրական երկը չափազանց կարևոր սկզբնաղբյուր է նաև լեհ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրության համար: Պետք է շեշտել, որ նկատի ունենալով տվյալ հանգամանքը, Հովհաննես Կամենացու երկասիրությունը թարգմանվել է նաև ռուսերեն [59]: Ինչպես աշխատասիրողը՝ Կ. Յուզբաշյանը, այնպես էլ մյուս գրախոսները Խոտինի պատերազմի պատմության վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ սկզբնաղբյուրների մեջ ամենաարժեքավորը համարում են հայ հեղինակի երկասիրությունը:

Հովհաննես Կամենացու կրտսեր ժամանակակիցն է նրա համաքաղաքացի Օքսենտ Կամենացին[60]: Օքսենտի ժամանակագրությունը գրված է հայերեն տառերով, սակայն ղպչաղերենով (թուրքերենի մի խոսվածք): Այս ժամա-

---

[59] «История Хотинской войны Ионнеса Каменецкого», տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1958, N 2, էջ 258-286, թարգմանությունը իրականացրել է Կարեն Յուզբաշյանը: Այս թարգմանության և ընդհանրապես երկասիրության պատմագրական արժեքի գնահատմանն է նվիրված ռուս-պատմաբան Մ. Ս. Ռաշբայի գրախոսությունը, տե՛ս «История СССР», ամսագիր, Մոսկվա, 1959, N 5, էջ 170-172:

[60] Տե՛ս «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ», Վենետիկ, 1896, էջ 68-109: Իդեպ, այս ժողովածուն տարբեր ստեղծագործությունների խմբագրություն է, որն ընդգրկում է 1430-1652 թվականների միջև ընկնող ժամանակաշրջանը և որը հրատարակել է Ղ. Ալիշանը:

նակագրությունը սկսվում է 1611 թ-ի հունվարից և վերջանում 1621 թ-ի նոյեմբերին: Օքսենտ Կամենացին անդրադառնում է նաև Խոտինի պատերազմի իրադարձություններին : Հեղինակը առանձին կենսագրական տեղեկություններ է հայտնում, որից պարզ է դառնում, որ նա Կամենեցի հայոց Ավագերեց Տեր Գրիգորի որդին է : Հեղինակը շատ լավ գիտի տարածաշրջանի խնդիրները, հայերի վիճակը, մասնավորապես նշելի է շատ կարևոր դեպքերին իր ականատես ու մասնակից լինելը: Ինքը Օքսենտը, վայելել է լեհական կառավարության վստահությունը: Երբ 1613 թվականին դեսպանություն է ուղարկվում Ստամբուլ, որպես թարգմանիչ պատվիրակության մեջ է ընդգրկվում նաև Օքսենտը: Ինչպես նշվեց նա ականատես է Խոտինի պատմության դեպքերին, օրինակ 1626 թվականի մարտերի մասին նա գրում է. «այս բաներն ստույգ ու ճիշտ են, որովհետեւ, ես Օքսենտս, որ այս գրում եմ, այնտեղ էի և իմ աչքերով տեսնում էի. իսկ ինչ որ լավ չէի իմանում ու տեսած չէի լինում, այդ մասին լավ տեղեկություն էի ձեռք բերում եւ գրի առնում»[61]:

Օքսենտ Կամենացու տեղեկությունները Խոտինի պատերազմին մասնակցող ռազմական ուժերի թվաքանակի վերաբերյալ չափազանց արժեքավոր են, ինչպես նշում են պատմաբանները՝ իրադարձությունների ճշգրիտ պատկերը ներկայացնելիս: Անշուշտ, Օքսենտի նպատակը չի եղել լե-

[61] «Կամենից», էջ 99:

հական թագավորության սահմաններում ապրող հայերի և մասնավորապես Խոտինում և շրջակայքում ապրող հայերի պատմությունը ներկայացնելը: Սակայն, խոստովանելի է, որ նրա տեղեկությունները անկասկած արժեք են ներկայացնում լեհական, մոլդովական և արևմտաուկրաինական պատմաբանների համար, որը, ինչ խոսք, ապացույց է հայ պատմագրական մտքի միջազգային դրսևորման տեսանկյունից:

Տարածաշրջանի՝ նույն ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար կարևոր է 16 դարի Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները[62]: Ճիշտ է, այս ժողովածուն անգամ պայմանականորեն չի կարելի անվանել պատմագրական երկասիրություն, սակայն կարևոր է հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության տեսանկյունից, քանզի այն անսպառ նյութ է մատակարարում հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական և մասամբ էլ քաղաքական կացության վերաբերյալ: Չպետք է մոռանալ, որ քաղաքը ունեցել է դատական ինքնավարության առանձնաշնորհ և ղեկավարվել հայկական օրենքներով: Այս արձանագրությունների ժողովածուն, անշուշտ, նպաստում է հայկական այս հինավուրց գաղթավայրի իրավատնտեսական կյանքի պատկերն ամբողջացնելու և հայ լեհական ու հայ ուկրաինական հարաբերություններն ուսումնասիրելուն:

---

[62] Աշխատասիրել է Վարդան Գրիգորյանը, Երևան, 1963:

XVII դարի հայ պատմագրության զարթոնքի առաջին նշանավոր լայնածավալ ստեղծագործությունը Գրիգոր վարդապետ Կամախեցու (Դարանաղցու մականվանյալ Բուք) «Ժամանակագրութիւն» երկասիրությունն է[63]:

Գրիգոր Դարանաղցին անցյալի մեր մատենագիրների մեջ բավականին բացառիկ դեմք է: Նա բոլոր պատմագիրներից տարբերվում է չափազանց կարևոր մի հանգամանքով, իր Ժամանակագրություն երկասիրության մեջ նա մանրամասն կենսագրական տեղեկություններ է հայտնում, և դա է պատճառը, որ մենք բավականին տեղեկացված ենք իր կենսագրության մանրամասներին:

Ընդհանրապես, նկատելի է, որ Դարանաղցու վերաբերյալ ուսումնասիրողները չափազանց հակիրճ են անդրադարձել, իսկ հատուկ ուսումնասիրություններ, ինչպես մենք տեսնում ենք այլ պատմագիրների վերաբերյալ (Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի և այլն), ի սպառ բացակայում են[64]: Հավանաբար, դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ այլ պատմագիրների հետ համեմատած չափազանց ուշ կատարվեց Դարանաղցու ժամանակագրության հրատարակությունը, երբ որոշ հեղինակների երկասի-

---

[63] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ», հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանյան, Երուսաղեմ, 1915:

[64] Բացառություն է կազմում Տիգրան Սավսլանյանցի երեք հոդվածները, որոնք լույս են տեսել Երուսաղեմի Սիոն ամսաթերթում (Սիոն, 1866, էջ 147-150, 167-171; 1867, էջ 141-144):

ությունները վաղուց լույս էին տեսել, երբեմն մի քանի անգամ: Սա տարօրինակ փաստ է, որովհետև Դարանաղցու երկասիրությունը եզակի ու լավագույն պատմագրական հուշարձան է XVII դարի հայոց պատմության առաջին կեսի վերաբերյալ [65]:

Գրիգոր Դարանաղցին ծնվել է 1576 թ-ին Դարանաղեաց գավառի Կամախ քաղաքում, հենց սրանով է բացատրվում նրա մականվան հորջորջումները: Դեռևս մանկական տարիքում որբանալով ծնողներից, մտել է Սեպուհ լեռան լանջին գտնվող Ծնանառճի Սուրբ Աստվածածին վանքը, ուր դառնում է նախրապան: Իր ժամանակագրության մեջ մանրամասն նկարագրում է իր կյանքն այս վանքում: Կրթությունը ստացել է Խորձիանք գավառի Սուրբ-Տիկին գյուղում գտնվող վարժարանում նշանավոր Պարոն անունը կրող ճգնավորի մոտ: Արդեն 14 տարեկան հասակում նա օծվում է կրոնավոր և դառնում Սուրբ Լուսավորիչ վանքի միաբան: 1597 թվականին ստացել է քահանայական աստիճան: Այնուհետև աշակերտել է նշանավոր Սրապիոն վարդապետ Բաբեղցուն, ստացել աստվածաբանական փայլուն կրթություն: 1600 թվականին, և հետագա տարիներին նա անցնում է Արևելյան Հայաստան, լինում Սաղմոսավանքի միաբան, միաժամանակ զբաղվում ձեռագրերի ընդօրինակությամբ,

---

[65] Իդեպ, Մաղաքիա արք. Օրմանյանը Ազգապատումի երկրորդ հատորը շարադրելու ընթացքում դեռևս ձեռագիր վիճակում լայնորեն օգտագործել է պատմագրական այս երկը:

ինչպես օրինակ Կիրակոս Գանձակեցու Պատմության ընդօրինակումը՝ 1603 թվականին, Բաբերդում:

1603 թվականին նա վերադառնում է Արևմտյան Հայաստան, և պաշտոնավարում Բաբերդի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, և այդտեղ ստանում վարդապետական իշխանության գավազան: Այնուհետև պատմագիրը դեգերում է տարբեր քաղաքներում՝ Տրապիզոն, Ղրիմի Կոզլով և Կաֆա քաղաքները, Կ. Պոլիս և այլուր: Կարևոր ճանապարհորդություններ է կատարել դեպի Կիպրոս, Եգիպտոս ու Երուսաղեմ (1605-1607 թթ.):

Արդեն Կ. Պոլիս վերադառնալու ժամանակը համընկավ այնպիսի մի ցավալի երևույթի հետ, ինչպիսին Ջալալիների շարժման հետևանքով Կամախի, Երզնկայի բազմահազար հայության դեպի Կ. Պոլիս փախուստն էր: Օսմանյան կառավարությունը զգալի ջանքեր էր գործադրում, որպեսզի տարագիրները ետ վերադառնան իրենց հայրենի եզերք: Պատմագիրը, որ այն ժամանակ հազիվ 34 տարեկան էր, առանձնակի եռանդ է թափում հայրենակիցներին հետ վերադարձնելու, ավերված վանքերն ու եկեղեցիները նորոգելու համար՝ 1610 թվականին 7000 գաղթականների գլուխ անցած նրանց առաջնորդում է դեպի հայրենիք:

1611 թ-ին Դարանաղցին դարձյալ վերադառնում է Կ. Պոլիս, իսկ շուտով նշանակվում է Ռոդոստոյի (Թեքիրդաղ) հայոց հոգևոր առաջնորդ (1619 թ.), և ամբողջ 34 տարի՝ մինչև իր մահը՝ 1643 թ-ի սեպտեմբեր, մեծ արդյունավե-

տությամբ վարում այն: Հոգևոր առաջնորդության բոլոր տարիների ընթացքում նա եռանդուն մասնակցություն է ցուցաբերում գրչագրության բնագավառում, կատարում Աստվածաշնչի և «Պատմութիւն Յովսեփայ եւ Ասանեթայ» ստեղծագործության և այլ բնագրերի դժվարագույն ընդօրինակությունները:

Իր առաջնորդության տարիներին նա հետևողական պայքար է մղել հայերի շրջանում կաթոլիկական պրոպագանդայով զբաղվող լատին հոգևորականների դեմ:

Մահացել է 67 տարեկան հասակում, աճյունն ամփոփվել է Ռոդոստոյի Սուրբ Փրկիչ եկեղեցու գավթում[66]: Մինչև 1915 թվականը դեռևս պահպանվել էր նրա տապանաքարը՝ «այս է տապան հանգստեան՝ Քեմախցի Գրիգոր Աւագ վարդապետի»[67], արձանագրությամբ:

Իր բազմաարդյուն հոգևոր-եկեղեցական գործունեության, ինչպես նաև գրչագրական արվեստով, գրական ժառանգությամբ, ժամանակակիցների կողմից դեռևս իր կենդանության ժամանակ հորջորջվել է իբրև «Քաջարդիւն հովիւ», «Ամենագովելի», «Երջանիկ», «Աստուածահաճո», «Սուրբ և քաջ ընտրեալ» և այլ անվանումներով:

---

[66] Տե՛ս Ս.Փաչաճյան, Հուշամատյան Ռոդոստոյի հայերուն (1606-1922), Բեյրութ 1971, էջ 174:

[67] Տե՛ս «Բյուզանդիոն», օրաթերթ, Կ Պոլիս, 1903, N 21-61, նաև «Հանդես ամսօրեայ», 1911, N 1, էջ 7:

1639 թ-ի մարտի 22-ի թվականով Կիրակոս Գրչի կողմից ընդօրինակված Կանոնագրչի հիշատակարանում նրա մասին գրված է. «քաջ հռետոր եւ ջատագով յօրինածն Աստծոյ , մեծ եւ անուանի եւ ամենայն իմաստիվքն Դարանաղու Գրիգոր վարդապետ»[68]:

Գրիգոր Դարանաղցուն, անշուշտ, ներկայացնողն ու գնահատողը առաջին հերթին նրա «Ժամանակագրութիւն» երկասիրությունն է[69]: Սույն երկասիրությունը Դարանաղցին գրել է պատվերով: Հայ մատենագրության մեջ հազվադեպ հանդիպող փաստ է, որ նրա մեկենասն իր աշակերտն է՝ Գասպար երեց Ակնեցին. « Մեք Գրիգոր տրուպ ամենայն վարդապետաց, հարգեալ մեր ի Գասպար իրիցիէ բանասիրք եւ իմաստակէ գրել համառոտ պատմութեանցս, գրելոցս»[70]: Անկասկած է որ, Ժամանակագրության մեջ սակավսակավ հանդիպող «Մեր Տէր Գասպար երէցն»[71], «մեր հոգևոր որդի Գասպար«[72] և կամ «զմեր հոգեւոր ձեռնասյուն որդյակն զՏեր Գասպարն»[73] հորջորջվածը հենց Դարանաղցու մեկենասն է: Գասպար Երեցը եղել է գործունյա, լեզվա-

---

[68] «Հանդէս ամսօրեայ», 1911, N 1, էջ 6:

[69] Ձեռագրի բնագիրը պահվում է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարանում: Ժամանակին այն գտնվել է Ռոդոստոյում, սակայն ե՞րբ և ու՞մ կողմից է բերվել Երուսաղեմ՝ հայտնի չէ:

[70] Գրիգոր Դարանաղցի, էջ 3:

[71] Նույնը, էջ 258, 328, 427:

[72] Նույնը, էջ 83:

[73] Նույնը , էջ 198:

գետ անձնավրություն, ունեցել է բարձրաստիճան հովանավորներ և շատ հաճախ Կ. Պոլսում պաշտպանել Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց մայրավանքի իրավունքները[74]:

Ժամանակագրությունը հեղինակի կողմից բաժանված է երկու մասերի, առաջինը սկսվում է մի ժամանկագրական ցանկով, որը ընդգրկում է 1018-1539 թթ. միջև տեղի ունեցած գլխավոր անցքերը, չափազանց համառոտ տեղեկություններով, իսկ բուն ժամանակագրությունը՝ իր երկասիրության հիմնական բաժինը, վերաբերում է 1555-1634 թվականների, այսինքն՝ 80 տարիների ընթացքում պատահած ժամանակակից ազգային եկեղեցական ու քաղաքական իրադարձությունների պատմությանը: Այս երկրորդ բաժնում է, որ նա առանձին գլուխներով անդրադառնում է իր ինքնակենսագրությանը, և մեկ առ մեկ նկարագրում զանազան վայրեր կատարած իր ճանապարհորդությունները, և այդ ճանապարհորդությունների ընթացքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Առանձին հատվածներով ներկայացնում է Պոլսում իր ապրած տարիներին պատահած դեպքերը՝ հատկապես Երզնկայի հայությանը հայրենիք վերադարձնելու ուղղությամբ իր թափած ջանքերը և այլն:

Դեռևս առաջին մասում նա անդրադառնում է այնպիսի կարևոր իրադարձությունների, ինչպիսիք են հայրապետա-

---

[74] Մկրտիչ եպ. Աղավնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ 1929, էջ 98:

կան աթոռը Սսից Վաղարշապատ փոխադրելու հանգամանքներին:

Բազմաթիվ շահեկան տեղեկություններ է հաղորդում Սսի կաթողիկոսական աթոռի և Երուսաղեմի պատրիարքության մասին, առանձնակի նկարագրում է Հայոց աշխարհի տարբեր վայրերը, վանքերը, վանականության կենսակերպը և այլն:

Հեղինակը ժամանակագրության մեջ բավականին տեղ է հատկացրել նաև Օսմանյան սուլթան Մուրադ IV-ի գահակալությանն ու ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում նրա ձեռնարկումներին՝ մինչև իր մահը:

Մոտավորապես այսպիսին է Ժամանակագրության համառոտ բնութագիրը: Մինչև Ժամանակագրության պատմագրական արժեքին անդրադառնալը նշենք, որ այն բացառիկ սկզբնաղբյուր է XVII դարի պատմության վերաբերյալ:

Նրա հիմնական նպատակն է եղել ներկայացնելու դարաշրջանում՝ Օսմանյան կայսրությունում, հատկապես նրա Արևելյան նահանգներում, և մասավորապես, Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձությունները՝ Ջալալիների շարժումը, նրանց արշավանքների հետևանքով դեպի Կ. Պոլիս և այլուր հայերի զանգվածային արտագաղթը, ժողովրդի կրած տառապանքները, նույն ժամանակաշրջանում եկեղեցական ու մշակութային կյանքը, Թուրքիայի

ներքին կյանքում՝ հատկապես կառավարման բնագավառում տեղի ունեցող երևույթները և այլն:

Նա ցավով է նկարագրում Հայաստանում ստեղծված վիճակը: Ինչպես այլ դեպքերում նշել ենք, պատմագրական երկասիրությունների արժեքը առաջին հերթին կայանում է նրանց հավաստիության և մասնակից ականատես լինելու հանգամանքի մեջ: Այս երկու հանգամանքներն էլ ամբողջությամբ վերաբերում են մեր պատմագրին: Նա ժամանակակից ու մասնակից է երկասիրության երկրորդ մասում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների: Նրա հաղորդած տեղեկությունները վերին աստիճանի հավաստի են, իսկ դրանք կարելի է ստուգել և համոզվել թուրքական համապատասխան սկզբնաղբյուրների օգնությամբ:

Ճիշտ է նկատված, որ Գրիգոր Դարանաղցու երկասիրությունը հայոց պատմության յուրօրինակ հանրագիտարան է[75]: Այդ արժևորումը ամբողջությամբ վերաբերում է հատկապես հայոց եկեղեցու պատմությանը վերաբերող նրա տեղեկություններին: Այստեղ ընդարձակորեն խոսվում է ներեկեղեցական կյանքի, անապատների ու անապատականների, դպրեվանքերի ու վանական համալիրների, նշանավոր հոգևոր մշակութային գործիչների, կաթոլիկական քարոզչության և աղանդավորական շարժումների մասին:

---

[75] Տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Հայ պատմագրությունը ուշ միջնադարում, տե՛ս «Հայոց պատմություն», հատոր II, գիրք երկրորդ (ՀՀ ԳԱԱ հրատ.), էջ 644:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1441 թվականից ի վեր՝ նոր իրադրության պայմաններում Սսի կաթողիկոսական աթոռի գործունեության մասին նրա բերած տեղեկությունները: Նա միով բանիվ արդարացված է համարում 1441 թվականի Կաթողիկոսական աթոռի տեղափոխման ակտը: Ճիշտ է, նյութը վերցրել է Թովմա Մեծոփեցուց, սակայն դրվատում է Աթոռի տեղափոխման հեղինակներին և դատապարտում բոլոր նրանց, ովքեր զահընկեց արեցին նորընտիր կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն[76]: Դատապարտում է եկեղեցական բարձր պաշտոններին տիրելու՝ համար հոգևորականների միջև ծավալված պայքարի փաստերը, ինչպես օրինակ Պոլսի պատրիարքական աթոռի համար պայքարը՝ Գրիգոր Կեսարացի, Հովհաննես Խուլ և Զաքարիա վարդապետների միջև[77]: Ատելությամբ է խոսում հայության շրջանում կաթոլիկական պրոպագանդա ծավալած միսիոներների և նրանց թակարդն ընկած կաթոլիկություն ընդունած հայերի մասին և շեշտում, որ դրանք շատ ավելի ստոր էին և մոլեռանդ, քան իրավ կաթոլիկները: Դրանք ավելի վտագավոր էին հատկապես գաղթավայրերում, ուր հայությունը մեծ թիվ չուներ և թույլ էր ու անկազմակեպ: Ասածն ապացուցելու համար բերում է Լեհաստանի հայկական համայնքի օրինակը: Այստեղ Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպիսի, և վերջինիս հովանավոր հայոց

---

[76] Գրիգոր Դարանաղցի, էջ 309-316:

[77] Նույնը, էջ 316-318:

Մելքիսեդեք աթոռակից կաթողիկոսի շահատակություններ-ը նպաստեցին լեհահայոց կաթոլիկ դառնալուն: Մելքիսեդեքի թողտվության ու կաշառակերության և Նիկոլ Թորոսովիչի ջանքերն իրենց ուշացնել չտվեցին՝ Լվովի հայակական համայնքը կաթոլիկացվեց[78]:

Գրիգոր Դարանաղցու համար ունիթորներից ու կաթոլիկ քարոզիչներից պակաս վտանգավոր չէին նաև հայոց եկեղեցու ծոցում ի հայտ եկած ամենատարբեր աղանդավորական շարժումները: Նա առավել ատելությամբ է խոսում XVI դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում ծավալված «Դիվաբնակ» Մեխլուի (Մխլո) գլխավորած աղանդավորական շարժման մասին[79] :

Ի դեպ այս շարժումների վերաբերյալ նրա հաղորդած առանձին վկայություններ, և հատկապես աղանդավորների քարոզած հայացքների վերլուծությունը, շատ դեպքերում եզակի են մեր եկեղեցու պատմությանը նվիրված գրականության մեջ :

Միևնույն ժամանակ Դարանաղցին հիացմունքով է խոսում իր ժամանակակից նշանավոր վարդապետներ Բարսեղ Բաղիշեցու, Կարապետ Մոկացու, Կիրակոս վարդապետի, Ազարիա փիլիսոփայի, Մովսես Սյունեցու և այլոց մասին, մեծարում նրանց ուսումնակրթական անդուլ ջանքերը, որ մի տեսակ մխիթարություն էին այն դաժան ու

---

[78] Նույնը, էջ 316-338:

[79] Նույնը, էջ 470-472:

վիատեցուցիչ ժամանակներում[80]: Հատկապես դրվատել է Արևելյան Հայաստանում իր օրերում սկիզբ առած անսպատական շարժումն ու անապատականներին, որոնք «եղել լուսավորիչք Վերին Աշխարհացն Հայոց եւ զարդարիչք անապատաւորաց»[81], մասնավորապես գնահատել ապագա Ամենայն հայոց կաթողիկոս Մովսես Տաթևացու (Սյունեցու) գործունեությունը:

Գրիգոր Դարանաղցու երկասիրությունը արժեքավոր է ոչ միայն հայ ժողովրդի, մասնավորապես հայկական համայնքների, այլև Օսմանյան կայսրության տվյալ ժամանակահատվածի պատմության չափազանց շատ հարցերի ուսումնասիրության տեսանկյունից: Խոսքը վերաբերում է նախ ջալալիների ապստամբության վերաբերյալ նրա հաղորդած տեղեկություններին[82]: Պատահական չէ, որ հմուտ թուրքագետ Մ. Զուլալյանը ջալալիների շարժմանը նվիրված իր մենագրությունում գրում է. «Գրիգոր Դարանաղցու Ժամանակագրության ամենակարևոր էջերը XVI դարի վերջերի և XVII դարի սկզբների քաղաքական դեպքերի նկարագրություններն են և հատկապես նրա ստույգ տեղեկությունները ջալալիների շարժման մասին[83]: Կարևոր են նաև Օսմանյան կայսրության ներքին կյանքին, քաղաքական

---

[80] Նույնը, էջ 394:

[81] Նույնը, էջ 262-263:

[82] Նույնը, էջ 13-22, 24-30, 35-40, 43-48 և այլն:

[83] Մ Զուլալյան , Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ , Երևան, 1966, էջ 30:

հարաբերություններին և մղված պատերազմներին նվիրված էջերը:

Բացի Ժամանակագրությունից, Դարանաղցին հեղինակել է նաև այլ երկասիրություններ, որոնց մի մասը մեզ չի հասել, որոշներն էլ՝ անծանոթ են : Հիմնավորված է նրա հեղինակությանը վերագրելու «Պատմութիւն Սուրբ հօրն երիցս երանելոյն Պարոն Միակեցին»[84], «Պատմութիւն Սեպուհ լերանց եւ զՄաքենեց եւ զԹաղենուցն յարեվելից կողմանցս»[85] երկասիրությունները, փոխարենը մեզ են հասել նրա կողմից ընդօրինակված մի քանի գրչագիր մատյաններ՝ Աստվածաշունչը և բազմաթիվ ձեռագրաց հիշատակարաններ[86]:

Նախորդ պատմաշրջաններում ի հայտ եկած և զարգացման երկար ուղի անցած տոհմագրությունների ու «տեղական հայրենիքներին» նվիրված երկասիրությունների ավանդույթի վերականգման մի հետաքրքիր փորձ է Հակոբ Կարնեցու Վերին Հայքին, կամ Կարնո աշխարհին նվիրված աշխատությունը[87]: Ինչպես արդեն պարզել է հմուտ ձեռագրագետ, աղբյուրագետ Վազգեն Հակոբյանը, սույն խորագի-

---

[84] Ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց հայոց վանքի ձեռագրատանը, N 175, տպագրությունը տե՛ս Գրիգոր Դարանաղցի, Ժամանկագրութիւն, էջ 591-599:

[85] Չի սպահպանվել:

[86] Գրիգոր Դարանաղցի, Ժամանկագրութիւն, էջ 599-600, 601-617, 617-619:

[87] Տե՛ս Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, աշխատասիրությամբ Կ. Կոստանյանցի, Վաղարշապատ, 1903: Քննական բնագիրը տե՛ս «Մանր ժամանակագրություններ». XIII-XVIII դդ., հատ. 2, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 548-589:

բը որևէ աղերս չունի բուն երկասիրության խորագրի հետ, որ Կ. Կոստանյանցի ոչ տեղին մուծումն է: Իրականում աշխատության, որ գրել է Հակոբ Կարնեցին, խորագիրը հետևյալն է. «Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէուդուպօլիս, որ այժմ Արզրում վերաձայնեալ կոչիլ»: Թյուրիմացությունը բացատրվում է նրանով, որ Կոստանյանցի հրատարակության հիմք ձեռագիրը բնագրի այն տարբերակն է, որ սկզբից թերի է եղել, և որտեղ խորագիրը բացակայել է, և փաստորեն շրջանառության մեջ մտած խորագիրը Կոստանյանցի առաջարկածն է[88]:

Հակոբ Կարնեցին ծնվել է 1618 թ. փետրվարին Կարին քաղաքում՝ հոգևորականի ընտանիքում: Նրա հայրը՝ Գևորգ քահանան, եղել է Կարինի Ավագերեցը: Ապագա պատմագիրը հոր հսկողության ներքո ստացել է աստվածաբանական կրթություն և իրեն նվիրել եկեղեցական և մատենագրական գործունեության: Զբաղվել է նաև ձեռագրեր ընդօրինակելով, որոցից մեկի հիշատակարանում գրում է. «Տառապեալ և զանպիտան Յակոբս, որ էմ մեղաւք ի լի և՝ էն Արզրումցի Թվին ՌՁԸ (=1639), գրեցի ի դուռն Ս. Աստուածածնի»[89]: 23 տարեկան հասակում Ս. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա. Աղբակեցու կողմից ձեռնադրվել է քահա-

---

[88] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ». XIII-XVIII դդ., հատ. 2, էջ 543-544:
[89] «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, էջ 542:

նա[90], եղել հոր՝ Տեր Հակոբի ժամասացը, այնուհետև՝ շուրջ 1662թ., քահանայագործել է ծննդավայրի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում, իսկ 1666թ. եղել Մուտուռկու վանքի առաջնորդական տեղապահ: Կենսագրական վերջին փաստը, որ հայտնի է մեզ, վերաբերում է 1672թ.:

Հակոբ Կարնեցին «Տեղագիրը» գրել 1668 թ. եղբոր՝ մեծահարուստ առևտրական Մաղաքիայի խնդրանքով, երբ արդեն 50 տարեկան էր և ավարտել նույն՝ 1668թ.. «Գրեցաւ Պատմութիւնս ի քաղաքս Արզրում ձեռամբ բազմամեղ Յակոբայ ի թուականիս մերոյ ՌՃԺԷ (=1668)»[91]: Աշխատանքի բուն նպատակը Բարձր Հայքի կամ Կարնո աշխարհի պատմաաշխարհագրական նկարագրի վերլուծությունն է: Այստեղ՝ նյութեր քաղելով նախորդ պատմագիրներից՝ Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ, նախ համառոտակի խոսում է Կարին-Թեոդոսուպոլիս քաղաքի հիմնադրման ու շինության, և տարածաշրջանում նրա խաղացած դերի մասին: Այնուհետև հեղինակը առանձին-առանձին ներկայացնում է Կարնո կուսակալության բոլոր 23 գավառները, կատարում նրանց տեղադրությունը, ներկայացնում բնակավայրերի դիրքն ու բնական

---

[90] «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հատ. 1, կազմեց Վ. Հակոբյան, Երևան 1951, էջ 242, հմմտ. էջ 248:

[91] «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, էջ 584:

հարստությունները, կլիման, լեռներն ու գետերը[92]: Ամենաարժեքավորն այստեղ պարունակված այն նյութերն են, որ վերաբերում են հայ ազգաբնակչությանը, նրա կազմին ու զբաղմունքին, տնտեսական կացությանը, գյուղերին, վանքերին, եկեղեցիներին, կենցաղին, սովորույթներին, վարք ու բարքին: Աշխատությունը չափազանց արժեքավոր է հատկապես Կարնո աշխարհի ազգագրական ու ժողովրդագրական իրական պատկերը վերականգնելու գործում[93]:

Անշուշտ Հակոբ Կարնեցին երբեմն ընկնում է չափազանցությունների գիրկը և ներկայացնում հայ ազգաբնակչության տնտեսական վիճակը («Ամենայն արանց ապրշում, ծիրանի և աթլաս»): Սակայն հասկանալի է, որ նրա խնդիրն ու նպատակը այլ է, ցույց տալով հայրենիքի հարստություններն ու գեղեցկությունը, ընթերցողի մոտ սեր և հպարտություն բորբոքել հայրենի եզերքի նկատմամբ, նրանց հորդորելով պաշտպան կանգնել հայկական պետականության վերակագնման գաղափարին: Ահա թե ինչու է հեղինակն

---

[92] Աշխատության արժեքի և նշանակության մասին մանրամասն տե՛ս Մ. Մալխասյան, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը, որպես պատմաաշխարհագրական հետազոտությունների աղբյուր, Ս. Էջմիածին, 2009:

[93] Այս առումով չափազանց կարևոր ու հետևողական պետք է համարել Ա. Ա. Մելքոնյանի պրպտումներն ու դրանց արդյունք հանդիսացող ուսումնասիրությունները, տե՛ս հատկապես Ա. Ա. Մելքոնյան, Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում 16-18 դդ., «Հայոց պատմության հարցեր», 2005, N 5, էջ 47-60 և այլն:

առանձնացնում Օսմանյան կայսրության հաջողություններ-ի գործում ուժեղ պետականության և ուժեղ անհատի առկայության փաստերը. « Եչ թե գովելով պատմեմ զայս, այլ ավաղելու և արատասուելու գրել հիշելով զբիրտ, զանկարգ և զանվարք զօրացն Հայոց, որ անհնազանդք եղել առաքելաց և հայրապետաց և թագաւորաց և իշխանաց, զի արտուղի գնացին և անբարտաւան շաղուռք շրջեցան»[94]:

«Տեղագիր Վերին Հայոց»-ը թեև ունի առավելապես տեղադրական, աշխարհագրական բնույթ, սակայն ճիշտ չէ, թե իբր այն «զուտ պատմական նյութեր պարունակող երկերի թվին չի պատկանում»,- ինչպես գրում է Վ. Հակոբյանը[95]: Այստեղ առկա պատմական նյութերն իրենց կարևորությամբ ու հավաստիությամբ այնքան առաջնային են ու տեղին, որ ակամայից հիշվում է Ղուկաս Ինճիճյանի «Չկա պատմություն առանց աշխարհագրության» առաջարկած բանաձևը: «Տեղագրի» արժեքը շեշտվում է նաև նրա վավերականությամբ, հեղինակի ականատես լինելու հանգամանքով: Աշխատությունը գրված է պարզ, մատչելի գրաբարով, ջերմ հայրենասիրական շնչով, կարդացվում է հետաքրքրասիրությամբ:

Բացի քննարկված երկասիրությունից, Հակոբ Կարնեցին հեղինակ է նաև 1482-1672 թթ. ընդգրկող մի համառոտ ժամանակագրության: Այս աշխատությունը նա շարադրել

---

[94] «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, էջ 562-563:

[95] Նույնը, էջ 544:

է, ինչպես և նախորդը, իր կրտսեր եղբայր Մաղաքիայի խնդրանքով[96]: Նա հեղինակ է նաև իր հոր՝ Գևորգ Ավագերեցի կենսագրությանը[97], ինչպես նաև «Պատմութիւն Ս. Աստվածածին եկեղեցւոյ Կարնոյ» գրվածքի[98]:

XVII դարի երկրորդ կեսի հայ պատմագիտական մտքի ամենաաչքի ընկնող դեմքը Առաքել Դավրիժեցին է: Նա ծնվել է մոտ 1590թ., Թավրիզում: Վաղ տարիքից տեղափոխվել է Էջմիածին՝ սովորել տեղի հոգևոր վարժարանում, աշակերտել Փիլիպպոս վարդապետ Աղբակեցուն: Այնուհետև զբաղվել է ուսուցչությամբ, եղել Հովհաննավանքի վանահայր: Իբրև Ս. Էջմիածնի նվիրակ այցելել է Պարսկաստան, Թուրքիա, Սիրիա, Պաղեստին, Հունաստան, եղել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, Պարսկաստանի հայկական գաղթավայրերում և հանուն Մայր Աթոռի՝ զբաղվել հանգանակությամբ:

Փիլիպպոս Ա Կաթողիկոսի հանձնարարությամբ 1651 թ. սկսել է շարադրել «Պատմութիւն» («Գիրք պատմութեանց», «Պատմագիրք») երկասիրությունը, և երեքամյա ընդմիջումից հետո (1655-1658) այն ավարտել 1658 թվականին: «Պատմութիւն» երկասիրությունը ընդգրկում է ընդամենը 60 տարվա (1602-1662) իրադարձությունների նկա-

---

[96] «Մանր ժամանակագրություններ», հատ. 1, էջ 239-244:

[97] Նույնը, էջ 246-249:

[98] Տե՛ս Նորայր եպ. Պողարյան, Հայ գրողներ, էջ 534:

բագրությունը[99]: Գրքում հանդիպում են նաև ավելի ուշ (մինչև 1668 թ.) շրջանի վերաբերյալ տեղեկություններ, որոնք անհարազատ են, և պատկանում են այլ հեղինակների: Առաքել Դավրիժեցու Պատմությունը նվիրված է XVII դարի առաջին կեսի Իրանի և հարևան երկրների (Վրաստան, Թուրքիա), ինչպես նաև հայկական մի քանի գաղթավայրերի պատմությանը: Հեղինակը մանրամասն և ճշմարտապատում տեղեկություններ է հաղորդում իր ապրած ժամանակների եղելությունների և իրադարձությունների վերաբերյալ: Առանձնակի արժեք ունեն XVII դարի սկզբների թուրք-պարսկական պատերազմների վերաբերյալ նրա հայտնած մանրամասները, որոնք իրենց եզակիությամբ և վավերականությամբ հաճախ գերադասելի են նույն իրադարձությունների վերաբերյալ թուրք և պարսիկ պատմագիրների հայտնած վկայություններից[100]: Հեղինակը ստույգորեն է ներկայացրել շահ Աբբաս I-ի կազմակերպած հայերի բռնագաղթը (1604) և տվել դրա դառնադետ հետևանքների նկարագրությունը: Այդ «աշխարհակործման» հրամանի համաձայն Արևելյան Հայաստանի ողջ բնակչությունը «բռնութեամբ բարեալ, ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարտու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ:

---

[99] Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ.Ա.Խանլարյանի, Երևան, 1990:

[100] Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Լ. Դանեղյանի մենագրությունը «Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր», Երևան, 1978:

Քանզի ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն... ասեմ աւուր միոյն ճանապարհ. և յայլուր տեսի, որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ»[101]: Այս բռնագաղթի հետևանքով է, որ «անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց, և օրինեալ քարոզութեամբ սրբոց առաքելոց՝ եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեր և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ,և արեան ծարաւիք մամնոյ: Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառան յանօրէն օրէնս պղծոյն անպատի»[102]: Պատմագիրը դիպուկ գծերով է բնութագրել շահ Աբբաս I-ի գործունեությունը և բացահայտել հայերի նկատմամբ նրա վարած քաղաքականության բուն էությունը: Առաքելը տարակուսում է, թե ինչու ոմանք գովաբանում են շահին և մերժելով նման ունայն պնդումները գրում է. «Ոմանք պնդում են, թե այս շահը քրիստոնասեր, աշխարհաշեն և խաղաղասեր թագավոր էր, նրա քրիստոնեասիրությունը Հայոց քրիստոնյա երկիրն ավերելն էր, ժողովրդի սրով, սովով և գերությամբ սպառելն էր»: Շահ Աբբասը,- եզրակացնում է

---

[101] Առաքել Դավրիժեցի, էջ 78-79:
[102] Անդ, էջ 87-88:

հեղինակը՝ «Հայոց աշխարհի ավերողն է և Հայոց ազգի կործանողը»:

Առաքել Դավրիժեցին ճշմարտապատում հեղինակ է: Նրա «Պատմութիւն»-ը արժեքավոր սկզբանաղբյուր է հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրման համար, այն եզակի տեղեկություններ է հաղորդում Լվովի հայոց ներքին կյանքի, ինքնավարության, կառավարման ձևերի, դատավարության, կենցաղի, Նոր Ջուղայի հիմնադրման ու ծաղկման, արհեստների, առևտրի զարգացման վերաբերյալ:

Դավրիժեցին զգալի ուշադրություն է դարձրել Հայոց եկեղեցու պատմության հարցերին, մանրամասն շարադրել է հայ հոգևոր զարթոնքի և այդ գործում Մովսես Տաթևացի, Փիլիպպոս Աղբակեցի և Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսների գործադրած ջանքերի, վանքերի ու դպրոցների հիմնադրման մասին: Հատկապես արժեքավոր են Պատմության այն գլուխները, որոնք վերաբերում են լեհահայոց ներհամայնքային կյանքին, մասնավորապես պապական աթոռի կողմից լեհահայերի բռնի կաթոլիկացմանը, Նիկոլ Թորոսովիչի ապազգային գործունեությանը և այլն: Պատմագիրը դատապարտում է Հայաստանում, Պարսկաստանում, Լեհաստանում և հայկական այլ գաղթավայրերում լատին միսիոներների ծավալած կաթոլիկական քարոզչությունը և մատնացույց անում հայությանը պառակտող նրանց գործելակերպը: Հեղինակը կոչ է արել դավանական միասնութ-

յամբ ու ազգային համերաշխությամբ պայքար մղել հոգեորսության յուրաքանչյուր դեպքի դեմ:

XVII դարի պատմագրական լավագույն երկասիրությունների շարքում իրենց ուրույն և պատվավոր տեղն ունեն **Զաքարիա սարկավագ Քանաքեռցու** հեղինակած աշխատությունները: Հայ մատենագիրների շարքում Զաքարիան հանրահայտ անձ է, նա վայելել է պատշաճ հարգանք և գնահատվել ըստ արժանվույն: Պատմագիր Զաքարիա Քանաքեռցին[103] ծնվել է 1627 թ. Քանաքեռում: Հայրը՝ Մկրտիչը, տարածաշրջանում հայտնի անձնավորություն էր, կրթված և գրասեր: Նա իր որդիներին տվել է ժամանակի համար լավ կրթության: Զաքարիան աշակերտել է իր պատանեկության օրերում չափազանց ճանաչված մանկավարժ, Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա եպ. Վաղարշապատեցուն: Սա 1637թ. Հովհաննավանքում հիմնադրում է վարժարան, որտեղ էլ իր ուսումնառությունն է սկսել 10-ամյա Զաքարիան: Ավելի ուշ աշակերտել է նաև Հովհաննավանքի նոր առաջնորդ Հովհաննես վարդապետին և պատմագիր Առաքել Դավրիժեցուն:

---

[103] Հանդիպում է նաև Զաքարիա Վաղարշապատեցի (տե՛ս Արսեն վարդապետ Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, հատ. 1, էջ 654), Զակքէոս (տե՛ս «Զաքարէա Սարկաւագի, Պատմագրութիւն», հատ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 142-143), Զաքարիա սարկավագ Յոհաւանեցի (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 1662) և այլ անուններով:

Ուսումնառությունն ավարտելուց հետո ձեռնադրվել է սարկավագ և ամբողջ կյանքում մնացել եկեղեցական այդ աստիճանին, քանզի եղել է կաղ, և 47 տարեկան հասակում դարձել ավագ սարկավագ, կամ ինչպես ինքն է գրում՝ «արշիդիակոն»: Հատկանշական է, որ Զաքարիան ամբողջ կյանքում եղել է Հովհաննավանքի միաբան: Այստեղ նա դասավանդել է վանական դպրոցում, բացի այդ զբաղվել նաև գրչությամբ:

Տարբեր տարիների և տարբեր առիթներով Զաքարիան շատ է ճանապարհորդել, եղել է Թավրիզում, Ղազվինում, Սպահանում, Զմյուռնիայում, Կ.Պոլսում և այլուր, Արևելյան և Արևմտյան Հայաստանների վանքերում, հաճախ մասնակցել Ամենայն հայոց կաթողիկոսների ուղեգնացություններին: Զաքարիայի մահվան թվականը հստակ չէ. Քաղաքացիություն ստացած 1699 թվականը վիճարկելի է: Ուսումնասիրություններում առաջարկվել է նաև 1700,երբեմն 1701 թվականները: Երիտասարդ պատմաբան Արմեն Վիրաբյանը, որ հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել Զաքարիա Քամաքեռցու կյանքն ու գործունեությունը հակված է 1701 թվականի օգտին:

Զաքարիա Քանաքեռցին հեղինակ է պատմագրական երկու ստեղծագործությունների[104]: 1687 թվականին Հով-

---

[104] «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ 1870: Հրատարակիչն այստեղ զետեղել է Պատմության առաջին (էջ 1-87), 2-րդ (նոր էջակալությամբ էջ 1-143), 3-րդ (Հովհաննավանքի Կոնդակը, նոր

հաննավանքի առաջնորդ Սարգիս վարդապետ Կարբեցու հանձնարարությամբ Զաքարիան գրել է վանքի պատմությունը՝ « Կոնդակ Սուրբ Ուխտին Յովհաննուվանից» , որն էլ ավարտել է նույն թվականին: Սա 16 գլուխներից բաղկացաց մի երկասիրություն է, որտեղ հեղինակն անդրադառնում է Հայաստանի քրիստոնեության դարձից հետո հիմնադրված առաջին վանքերին ու եկեղեցիների կառուցմանը, նույն այդ ժամանակներում Հովհաննավանքի հիմնադրմանը, վանքապատկան կալվածներին, վանքի նորոգումների, տնտեսական կացության և հարակից այլ հարցերի: Այնուհետև, ժամանակագրական կարգով ներկայացնում է վանքի առաջնորդների ցանկը և ավելի մանրամասն կանգ առնում իր ժամանակների երեք նշանավոր վանահայրերի՝ Զաքարիա Վաղարշապատեցու, Հովհաննես և Սարգիս Կարբեցիների գործունեության վրա: Պատմագիրը բերում է Հովհաննավանքի վերաբերյալ իրեն հայտնի մատենագրական բոլոր վկայությունները, միաժամանակ նա ընդօրինակում է վանքի վիմագիր արձանագրությունները ու դրանց տվյալները օգտագործում երկասիրության շարադրման ժամանակ: Իր պարունակած նյութերով, աղբյուրագիտական հենքով, քննարկման մեթոդով, սույն երկասի-

---

էջակալությամբ՝ 1-46) հատորները: Տե՛ս նաև նոր քննական բնագիրը՝ «Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն(էջ 38-183) և «Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհանու վանից» (էջ 176-204), աշխատասիրությամբ Արմեն Վիրաբյանի, Երևան 2015:

ությունը մոտենում է գիտական-քննական ուսումնասիրություններին ներկայացվող պահանջներին: Այն, փաստորեն, Հովհաննավանքի տնտեսական պատմությունն է, և որպես այդպիսին շատ կարևոր, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ պատմագրական հուշարձանների շարքում:

Հովհաննավանքի Կոնդակի շարադրանքն ավարտելուց հետո՝ նույն 1687 թ., Զաքարիա Քանաքեռցին սկսել է իր «Պատմագրութիւն» երկասիրության շարադրանքը, որը շարունակվել է երկու տարի և ավարտվել, ինչպես ինքը՝ պատմիչն է հավաստում 1699 թ-ի մայիսի 30-ին: Երկասիրության առաջին հատորն ունի 48, իսկ երկրորդը՝ 68 գլուխներ: Հետագայում Հովհաննավանքի Կոնդակը միացվում է Պատմագրությանը որպես գործի երրորդ հատոր[105] և այդ ամբողջությամբ էլ կատարվել է հուշարձանի առաջին հրատարակությունը (1870) ու դրանից կատարված թարգմանությունները:

Աշխատության առաջին հատորն ունի քաղաքական բնույթ և պատմագրական առանձին արժեք չի ներկայացնում: Չափազանց համառոտակի անդրադառնալով Պարթև Արշակունիների պատմությանը, այնուհետև պատմագիրը թռիչք է կատարում դեպի XV դարի կեսերը: Այս բաժինը

---

[105] Զաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգությանը լավատեղյակ Ա. Վիրաբյանի առաջարկը «Պատմագրութիւն» խորագիրը փոխարինելու «Պատմութիւն» խորագրով, մեր կարծիքով հիմնավորված չէ, ուստի մենք շարունակում ենք օգտագործել ավանդական «Պատմագրութիւն» եզրը:

սկսվում է թուրքմեն տիրակալ Ջահանշահի տիրակալության շրջանից (1437-1467) և ավարտվում Երևանի Թահմազկուլի խանի կառավարման շրջանով (1635): Երկրորդ հատորն ընդգրկում է 1635-1699 թվականների ժամանակաշրջանի իրադարձությունները: Առաջին հատորի շարադրման սկզբնաղբյուր են հանդիսացել Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, X դարի հեղինակ Անանուն Զրուցակցի (Կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Կիրակոս Գանձակեցու, Թովմա Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու համապատասխան երկասիրությունները, ժողովրդական զրույցները, բանահյուսական նյութերի առանձին միավորները, վիմագիր արձանագրությունները և այլն: Շեշտելի է, որ հեղինակը քննադատաբար չի մոտենում իր օգտագործած սկզբնաղբյուրներին, անվերապահորեն վստահում է դրանց և առանց դյուզն իսկ միջամտության, զետեղում իր գրվածքում: Սակայն առաջին հատորի ԻԸ (28)՝ «Վասն Ամիրգունայ խանին» վերտառությամբ գլխից սկսյալ նա ձեռնամուխ է լինում ժամանակակից դեպքերի շարադրանքին, բայց արդեն որպես ականատես: Հանգամանք, որ նա անհրաժեշտ է համարել շեշտելու. «Այսուհետև ականատես եմ եւ ականջալուր մերձակայ իրաց. Վասն որոյ գրեմ զամենայն անվրէպ[106]»: Դարձյալ պետք է շեշտել, որ Զաքարիան մեր այն պատմագիրներից է, որ կանոնավոր, ջանասիրաբար թվար-

---

[106] «Մանր ժամանակագրություններ», հատոր II, էջ 68-69:

կում է իր օգտագործած աղբյուրները նշում թե ո՞վ է իրեն պատմել կամ ո՞մից է լսել այս կամ այն դեպքը[107]: Այս հատորում հեղինակը լայնորեն օգտագործել է ժողովրդի մեջ պարսից շահերի վերաբերյալ տարածված զրույցներն ու ավանդապատումները, առասպելներն ու զվարճապատումները, անգամ երգերը (շահ Իսմաիլ, շահ Սեֆի, շահ Աբաս I Մեծ, շահ Թահմազ և այլն): Զաքարիա Քանաքեռցու սույն երկասիրությունը հիանալի սկզբնաղբյուր է XVII դարի կեսերի Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու տնտեսական կացության վերաբերյալ: Առանձնակի արժեք են ներկայացնում հայկական գյուղական համայնքի, հայ առևտրական կապիտալի, հարկային համակարգի, գաղութահայության կյանքի, հայոց եկեղեցու, մշակույթի և հարևակից այլ հարցերին վերաբերող նյութերը:

Հայտնի է, որ մեր մատենագիրները դիտավորյալ խուսափում են աղանդավորական շարժումների վերաբերյալ տեղեկություններ արձանագրելուց: Զաքարիան բացառություն է: Աշխատանքի Ա հատորի ԻԹ գլուխը, որ կրում է «Դիպուածք չարաց ի սորա ժամանակի» խորագիրը, ցասումով վերլուծում է «Նեռի կարապետ» Մեխլուի 1606-1620 գլխավորած աղանդավորական շարժման մանրամասները: Ի հակադրություն ազգային միասնությունը քանդող խառնա-

---

[107] Օրինակ՝ «զայս պատմեաց Յովհան վարդապետ Կարնեցի» («Մանր ժամանակագրություններ», հատոր Բ, էջ 29, հմմտ. Նաև հատոր Ա, էջ 56-59, հատոր Բ էջ 116 և այլն) :

կիչների, պատմագիրը փառաբանում է լուսավորական շարժման առաջամարտիկներ, հայ մտավոր կյանքի ու եկեղեցու վերանորոգիչներ Մովսես Տաթևացի, Փիլիպպոս Աղբակեցի, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների գործունեությունը և դրվատում նրանց դպրոցաշինական ու եկեղեցաշինական ջանքերը:

Չի կարելի թերագնահատել Քանաքեռցու երկասիրությունը, որպես պարսկա-օսմանյան հարաբերություններին վերաբերող արժեքավոր սկզբնաղբյուրի: Նա հավաստի տեղեկություններ է հաղորդում XVII առաջին կեսին թուրք-պարսկական պատերազմների, մասնավորապես 1604 թվականին իրականացված հայերի բռնագաղթի մանրամասների վերաբերյալ:

Բայց իհարկե, այս երկասիրությունում լավագույնը գյուղական համայնքի ներքին կյանքը, հայ գյուղացու կենցաղն ու տնտեսությունը, սովորույթները ներկայացնելն է: Այն մի ամբողջ ազգագրական նյութերի շտեմարան է[108]:

Զաքարիա Քանաքեռցին իր երկասիրությունները շարադրել է գրաբար, որ տեղ-տեղ մոտենում է ժամանակի հասկանալի, խոսակցական լեզվին, նրա ոճը պարզ է, խոսքը կենդանի , ընթերցվում է անսքող հետաքրքրությամբ:

«Պատմագրությունը» թարգմանվել է ֆրանսերեն (1876), ռուսերեն (1969, 2012), անգլերեն (2004), իսկ Վարագ Առա-

---

[108] Հատկապես տե՛ս հատոր Բ, էջ 1-3 և այլն:

քելյանի արևելահայ թարգմանությունը լույս է տեսել 2013 թվականին:

XVII դ. հայ մշակույթի և մասնավորապես պատմագիտության ականավոր դեմքերից է պատմագիր, մանկավարժ, գրիչ, երաժիշտ, ծաղկող, տպագրիչ, բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Երեմիա Քյոմուրճյանը (Երեմիա Չելեպի, Հաճի խալֆա քյաթիպ Չելեպի): Ե. Քյոմուրճյանը ժամանակի հայ իրականության բազմակողմանիորեն զարգացած, հանրագիտական գիտելիքներ ունեցող մտավորականներից է: Նրա գրական ժառանգությունն անջնջելի հետք է թողել հայ մշակույթի պատմության մեջ և շատ կողմերով պայմանավորել XVIII դ. գրական-կրթական-լուսավորական շարժման վերընթացը[109] :

Ծնվել է 1637 թ. մայիսի 22-ին Կ. Պոլսում: Արդեն ութ տարեկան հասակում գրաճանաչ էր և առաջին գրական գրչափորձն էր կատարել: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի Ս. Սարգիս եկեղեցու վարժարանում: 1649 թ. ձեռնադրվել է դպիր[110]: Այնուհետև աշակերտել է ժամանա-

---

[109] Երեմիա Քյոմուրճյանի ընդհանուր և մասնավորապես գրական-գեղարվեստական վաստակի մասին մանրամասն տե՛ս Ն. Ակինյան, Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Կյանքն և գրական գործունեություն, Վիեննա, 1933, տե՛ս նաև Հ. Սահակյանի «Երեմիա Քյումուրճյան» ուսումնասիրությունը (Երևան, 1964), նաև Գ. Այվազյանի հրապարակումները (տե՛ս «Էջմիածին», 2012, N 8, էջ 48-54, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2014, N 20, էջ 349-398 և այլն):

[110] Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն, հրատարակության պատրաստեց Մ.Նշանյան, Երուսաղեմ, 1939, էջ 6:

կի աչքի ընկնող մտավորականներ Մարտիրոս Ղրիմեցուն և Եղիազար Այնթափեցուն: 1657 թ. Հրաժարվել է հոգևոր կոչումից և դարձել աշխարհական: Եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ատենադպիր ու պատրիարքի խորհրդականը: Պաշտոնի բերումով շատ է ճանապարհորդել, եղել է Թուրքիայի հայաշատ բոլոր վայրերում, Արևմտյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հայկական հիմնական գաղթավայրերում, նաև Արևելյան Հայաստանում: 1676 թ. Կ. Պոլսում հիմնադրել է հայկական տպարան, որն իրավամբ համարվում է պոլսահայ տպագրության հիմնաքայլը:[111] Կյանքի վերջին տարիներին զբաղվել է նաև ուսուցչությամբ: Հետաքրքիր է, որ իր որդուն՝ Գրիգորիսին, ուղղված մի գրության մեջ շեշտում է. «Պարտիս սիրել զիս որպէս զվեհագույն վարժապետ»[112]:

Ե. Քյոմուրճյանը հայ ազատագրական շարժման նախանձախնդիրներից էր, եղել է Հակոբ Դ. Ջուղայեցու կողմնակիցն ու գաղափարակիցը: Ստեղծված իրադրության պայմաններում նա հայ ժողովրդի փրկության խարիսխն էր համարում լուսավորությունը, գիրքն ու դպրոցը, իսկ ազգային ինքնությունը պահպանելու ամենահիմնական միջոցները՝ լեզուն, պատմությունը և եկեղեցին:

---

[111] Մանրամասն տե՛ս Գ. Այվազյան, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը, «Էջմիածին», 2012, N 8, էջ 48-54:
[112] Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, նշվ. աշխ., հավելված, էջ 457:

Արգասառատ է Քյոմուրճյանի գրական ժառանգությունը, բազմակողմանի ու այլաբնույթ: Նա թողել է ինչպես պատմագրական, աշխարհագրական և տեղագրական աշխատություններ, այնպես էլ արձակ երկեր, բանաստեղծություններ, թարգմանություններ: Հայերենից թուրքերեն է թարգմանվել
«Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի», «Նոր Կտակարան», «Սաղմոսք Դաւթի» գործերը, « Յայսմավուրք» ժողովածուն, համառոտելով թուրքերենի է վերածել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը:

Ե. Քյոմուրճյանի պատմագիտական երկերն իրենցից մեծ արժեք են ներկայացնում և ունեն համընդհանուր արևելագիտական նշանակություն: Նրա աշխատությունների մեջ առանձնանում է 1675 թ. Հակոբ Դ Ջուղայեցու պատվերով գրված օսմանյան սուլթանների պատմությանը նվիրված չափածո երկասիրությունը[113]: Աշխատությունը բովանդակում է Օսմանյան կայսրության շուրջ 400 տարվա (1299-1678), այսինքն՝ 19 սուլթանների պատմությունը՝ Օսման I-ից (1299) մինչև Մեհմեդ IV-ի գահակալությունը (1678): Այն բաղկացած է 19 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մեկ առանձին սուլթանի ժամանակաշրջանի պատմությանը: Ամբողջ երկասիրությունը ստորաբաժանված է չորս շրջանի՝ 1. Սկզբից մինչև 1512թ., 2. 1512-1595թթ.,

---

[113] Ե. Քյոմուրճյան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ՝ Ժ. Ավետիսյանի, Երևան, 1982:

3. 1595-1648թթ., 4. 1648-1678թթ.: Առաջին երեք մասերը, որ շարադրվել են հայկական և թուրքական սկզբնաղբյուրների (Թովմա Մեծոփեցի, Առաքել Դավրիժեցի, Ազարիա Սասնեցի, Գրիգոր Կամախեցի Վարդան Բաղիշեցի, Սոլաքզադե, Լյութֆի, Աշըք փաշա, Քյաթիբ Չելեպի և այլք) հիման վրա, ունեն բանաքաղային բնույթ, իսկ չորրորդը, որ 30 տարվա ժամանակահատվածի պատմություն է, հեղինակը շարադրել է որպես ականատես և ականջալուր:

«Պատմութիւն»-ը արժեքավոր, հաճախ եզակի տեղեկություններ է հաղորդում Օսմանյան Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական կացության, պետական կարգի, հարկահանության, ներքին ու արտաքին քաղաքականության, նվաճված ժողովուրդների վիճակի, թուրքական տիրապետության դեմ ծավալված ազատագրական պայքարի և հատկապես արևմտահայ իրականության մասին: Երեմիան նկարագրելով նվաճված երկրներում և մասնավորապես Հայաստանում թուրքերի մղած պատերազմները, միաժամանակ կսկիծով է ներկայացնում նրանց կազմակերպած կոտորածները, արհավիրքները, բռնի հավատափոխության դեպքերը: Եվ եթե թուրք պատմագիրները այդ բոլորը ներկայացնում էին որպես թուրքերի հերոսականություն, քաջության ու սխրագործությունների օրինակներ, ապա Երեմիան, ցույց տալով նման պնդումների մերկապարանոց լինելը, գտնում է, որ ջարդը, թալանը, ոչնչացումը եղել են թուրքերի էությունը, նրանց գործունեության անբաժան

ուղեկիցները: Օրինակ է բերում Հայաստանը, որտեղ թուրքերը «հերոսականությամբ». «զվանս և զեկեղեցիս, զգիւղս և զքաղաքս քանդեցին, կործանեցին, զավար առին, բոլորին կոտորեցին»: 1695 թ. Քյոմուրճյանը կազմել է այս երկասիրության արձակի համառոտ տարբերակը,որը սակայն մնացել է անտիպ[114] և կրում է «Համառօտ պատմութիւնք թագաւորաց Օսմանցոց» խորագիրը:[115] Աշխատանքը սկըսվում է սուլթան Օսման I-ից և ավարտվում սուլթան Մուստաֆա I-I-ի գահակալության առաջին տարով՝ 1695թ.: Այստեղ հեղինակը անդրադարձել է նշված ժամանակաշրջանի կայսրության ներքին և արտաքին քաղաքականության հարցերին, ոչ հաճախ, սակայն առանձին հարցերի կապակցությամբ քննարկման առարկա է դարձրել պոլսահայ համայնքի ներքին կյանքի որոշ հարցեր:

Օսմանյան Թուրքիայի և մասնավորապես Կ. Պոլսի հայկական համայնքի պատմության ուսումնասիրման տեսանկյունից արժեքավոր է հատկապես Քյոմուրճյանի՝ Կ. Պոլսի պատմությանը նվիրված մեծածավալ չափածո երկասիրությունը[116]: Այստեղ հեղինակը տեղեկություններ է

---

[114] Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր N1786: Երկու այլ օրինակներ ևս գտնվում են Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում, ձեռագիր N 464 և 1178:

[115] Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 1786:

[116] Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան, Սամպօլոյ պատմութիւն, հատ. Ա-Գ, հրատարակեց և ծանոթագրեց Վ. Թորգոմյան, Վիեննա, 1913, 1932,

հայտնում Կ. Պոլսի անցյալի պատմության վերաբերյալ, մանրամասն նկարագրում քաղաքի ճարտարապետական կառույցները, քաղաքամերձ շրջանները, ներկայացնում քաղաքի էթնիկ կազմը, բնակչության զբաղմունքը, մշակույթը, ապրելակերպը, կենցաղը; Հեղինակը տեղեկություններ է հայտնում նաև թուրքական պետական ապարատի, պետական կառույցների ու հիմնարկների, ներքին ու արտաքին առևտրի, գյուղատնտեսության, արհեստների մասին և այլն: Աշխատության առավել արժեքավոր հատվածները Կ. Պոլսի հայկական համայնքին նվիրված էջերն են: Մասնավորապես վավերական արժեք ունեն Հայոց պատրիարքարանին, առանձին հոգևոր գործիչներին և եկեղեցու ներքին կյանքին վերաբերող նրա հարցադրումները: Հեղինակը անարգանքի սյունին է գամել պորտաբույծ, շահասեր այն հոգևոր գործիչներին, որոնք զբաղված էին շահատակությամբ ու թուլացնում էին համայնքի միասնությունը: «Պատմութիւն հրկիզման Կ. Պոլսոյ» երկում[117] դատապարտել է թուրքական դժնդակ իրականությունը, ցույց տվել բռնակալության պայմաններում հայ ժողովրդի տնտեսական ծանր վիճակը, կրոնական ու քաղաքական անիրավահավասարությունը:

1939: Տե՛ս նաև սույն գրքի պրոֆ. Հ. Անդրեասյանի թուրքերեն թարգմանությունը՝ «Eremıa Çelebı Kömürcuyanö Istambul Tarıhıö Istambulö, 1952»:

[117] Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, Պատմութիւն հրկիզման Կոստանդնուպօլսոյ, հրատարակության պատրաստեց Գ. Բամպուրճյան, Ստանպուլ, 1991:

Երեմիա Քյոմուրճյանը այն եզակի հայ պատմագիրներից է, որն իր առօրյա գործունեության հիմնական դրվագներն արձանագրել է հատուկ օրագրում: Այս ճանապարհով է ստեղծվել նրա նշանավոր «Օրագրութիւն» երկասիրությունը[118]: Օրագրությունն ընդգրկում է 1648-1662 թթ. ժամանակահատվածում տեղի ունեցած հեղինակի կյանքի ու գործունեության հիմնական իրադարձությունները: Ինքնակենսագրական, հուշագրական հարուստ տեղեկություններից զատ, «Օրագրութիւն»-ը արժեքավոր փաստեր է հաղորդում տվյալ ժամանակաշրջանի Թուրքիայում կատարված կարևոր դեպքերի, հայկական գաղթավայրերի, հասարակական ու եկեղեցական գործերի, Օսմանյան տիրակալության մեջ ապրող բնակչության կենցաղի, սովորույթների, կրոնի, բարքերի, պետական ու հոգևոր գործիչների մասին: Հայոց եկեղեցու պատմության համար առաջնային, սկզբնաղբյուրի նշանակություն ունեն XVII դ. երկրորդ կեսի եկեղեցական տագնապի և մանավանդ թուրքահայոց առանձին կաթողիկոսություն ստեղծելու վերաբերյալ վկայությունները: Քյոմուրճյանի «Օրագրությունը» միայն զուտ կենցաղային բնույթի փաստեր չի հաղորդում, այն օրագրողի անձնական ներապրումների դրսևորման եղանակ չէ: Հեղինակը հետևում է կայսրության ներքին և արտաքին կյանքում տեղի ունեցած դեպքերին և կարևոր փաստեր հայտ-

---

[118] Երեմիա Չելէպի Քէօմիւճեան, Օրագրութիւն, հրատարակության պատրաստեց Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1939:

նում դրանց մասին: Օրագրության համար սկզբնաղբյուրներ են հանդիսացել թղթեր, նամակներ, հրամանագրեր, վճռագրեր և այլն: Այս հանգամանքը չափազանց բարձրացնում է պատմագրական հուշարձանի նշանակությունը և այն դարձնում եզակի տվյալ ժամանակահատվածի արևմտահայոց կացության ուսումնասիրության տեսանկյունից: Հեղինակն իր տեսական և պրակտիկ գործունեությամբ հսկայական ջանքեր է թափել եկեղեցական միասնությունը վերականգնելու ուղղությամբ, անարգանքի սյունին է գամել բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս այդ միասնության դեմ և արհեստականորեն հայությանը բաժանում էին երկու հակադիր հատվածների: Սույն երկասիրությունում հստակորեն է արտացոլվում հեղինակի այդ մտայնության գծապատկերը:

«Օրագրութեան» հիման վրա 1692-1693 թթ. հեղինակը շարադրել է «Տարեգրական պատմութիւն» երկասիրությունը, որն ընդգրկում է 1648-1690 թթ. իրադարձությունները[119]: Օսմանյան կայսրության և արևմտահայոց XVII դ. կարևոր սկզբնաղբյուրներն են «Վիպասանութիւն յառումն Կրետէ կղզւոյ», «Վիպասանութիւն յԱպրօ Չելէպի», «Պատմական բանք իւրոյ ժամանակին» և այլ երկասիրություններ (բոլորն էլ անտիպ):

---

[119] Անտիպ, հեղինակի ինքնագիր օրինակը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը, N 509:

Առանձնապես պետք է արժևորել Քյոմուրճյանի քարտեզագրական մի ուսումնասիրություն, որ կրում է «Հայաստանեաց եկեղեցւո քարտեզ» խորագիրը: Երկար ժամանակ բնագիրը անհայտ էր: Միայն վերջերս պարզվեց, որ այն պահվում է Բոլոնիայի Ճշգրիտ գիտությունների ակադեմիայի գրադարանում: Սույն երկասիրությունը մանրամասն քննարկման առարկա է դարձել Գ. Ուլուհոճյանի կողմից[120]:

Ներկայացնել Քեոմուրճյանի պատմագիտական հայացքներն առանց Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի մահվան կապակցությամբ (1 օգոստոսի, 1680 թ.) շարադրված նրա «Ողբ»-ի և «Համառօտ հարցմունք և պատասխանիք» ստեղծագործության վերլուծության, նշանակում է անավարտ թողնել նրա վերաբերյալ մեր խորհրդածությունները: Հայտնի է, որ Հակոբ Դ-ն Կ.Պոլիս էր այցելել Հռոմ գնալու ճանապարհին, ուր նախատեսված էր Հայաստանի ազատագրության հարցի շուրջ բանակցություններ վարելու պապի հետ: Ինքը Քյոմուրճյանը ամենագործուն աջակցությունն է ցուցաբերել կաթողիկոսի այդ ձեռնարկին: Նա է որ կազմակերպել է Պոլսի հայոց վերնախավի ներկայացուցիչների հետ կաթողիկոսի հանդիպումները, ի վերջո Հայոց հայրապետին համոզել թղթակցել Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու հետ, որի գլխավորած բանակները ջախջախել էին թուրք-

---

[120] Տե՛ս Գ. Ուլուհոճյան, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի նորահայտ քարտեզը, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 2, էջ 185-188:

ական զինված ուժերին և այժմ հայկական որոշ շրջաններում նա դիտվում էր Հայաստանն ազատագրողի հնարավոր թեկնածու: Հետաքրքիր է, որ պատմիչը մատնանշում էր նաև հայոց ազատագրության մեկ ուրիշ այլընտրանքային ուղի: Դա նրա կարծիքով հոգևոր, մշակութային անկախություն, ազգային ինքնագիտակցություն ունենալու հանգամանքն էր, որին հասնելը հնարավոր կլիներ , եթե

Դպրատունք բացեալ,
Մարզարանք բանեալ,
Աշակերտք վարժեալ,
Դասատունք հաստեալ,
Վարժապետք հարգեալ,
Իմաստք յառաջեալ,
Գիտութիւնք աճյալ...[121]

«Համառօտ հարցմունք եւ պատասխանիք» ստեղծագործությունում հեղինակը հիշեցնելով հայոց պատմության հերոսական դրվագները, ժամանակակից սերնդին կոչ է անում ունենալ ազգային արժանապատվություն, պահպանել մայրենի լեզուն, զարգացնել մշակույթը, լինել հայոց եկեղեցու նվիրյալ [122]:

---

[121] Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Ողբ ի վերայ Յակոբ կաթողիկոսի, տե՛ս «Հանդէս ամսօրեայ»,1933, № 9-10, էջ 589-595, Ն. Ակինյանի աշխատասիրությամբ:

[122] Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Համառօտ հարցմունք և պատասխանիք, տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր, № 72, էջ 131ա-173ա:

Երեմիա Քյոմուրճյանը հայ միջնադարի վերջին ականավոր պատմագիրն է, որն իր ստեղծագործություններով նախանշեց նոր ժամանակների հայ պատմագիտության զարգացման ուղենիշները:

Օրագրության ժանրի հաջորդ ներկայացուցիչը առևտրական և ճանապարհորդ Զաքարիա Ագուլեցին է: Նա ծնվել է 1630թ. Ագուլիս քաղաքում: Ուսումնառությունը ստացել է հորեղբորորդու՝ Տեր-Մելքում քահանայի վարժարանում: Վաղ տարիքից զբաղվել է վաճառականությամբ: Առևտրական գործունեություն է ծավալել նախ Պարսկաստանում և Թուրքիայում, իսկ այնուհետև՝ Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Հոլանդիայում: Սովորություն է ունեցել օրագիր պահելու, որը սկսվում է 1647 թ. մարտի 5-ից, և ավարտվում 1681 թ. հոկտեմբերի 11-ին: Այստեղ Զաքարիան պարզ, անպաճույճ ոճով գրի է առել ոչ միայն իր գլխով անցած դեպքերը, ինչպես նաև առևտրական գործարքների, ապրանքների գների, մաքսերի, օգտագործվող կշիռների, չափերի, դրամների, փոխադրամիջոցների, քաղաքների ու բնակավայրերի միջև եղած հեռավորությունների, ցամաքային և ծովային ճանապարհների, իջևանատների և նման այլ հետաքրքրական իրողությունների մասին[123], այլ նաև ընթերցողին է ներկայացնում հայ առևտրական կապիտալի Թավրիզ Երևան-Էրզրու-

[123] Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938:

մ_Զմյուռնիա-Վենետիկ-Ֆրանկֆուրտ-Ամստերդամ ուղին: Բացի այդ, Զաքարիան անդրադառնում է նաև տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի, մասնավորապես եկեղեցու կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններին: Օրագրության մեջ առանձնակի հետաքրքրություն են ներակայցնում իր Ագուլեցու ընտանիքի ժամանակագրությանը նվիրված հատվածները: Դրանք անգնահատելի նյութ են պարունակում XVII դ. երկրորդ կեսի հայ ընտանիքի կենցաղի, բարքերի ու սովորույթների վերաբերյալ և ունեն ազգագրական մեծ կարևորություն (ամուսնություն, ծնունդ, մահ, ընտանիք, ուխտագնացություններ, շինարարություն, տնտեսություն, ունեցվածքի բաժանում և այլն): Կարևոր են նաև Արևելյան Հայաստանի գյուղական համայնքի կառուցվածքի, ներհամայնքային հարաբերությունների, բնակչության հարստահարման, հարկերի գանձման ձևերի վերաբերյալ տեղեկությունները: Ագուլեցու բերած թվական տվյալները, գանձման ձևերի վերաբերյալ խիստ հավաստի են, նրա մոտ ժամանակագրական սխալներ գրեթե չկան: «Օրագրութիւն»-ը գրված է ժողովրդի խոսակցական, գործածվող աշխարհաբար լեզվով: Զաքարիա Ագուլեցին մահացել է 1691 թվականին:

Միջազգային առևտրում հայ վաճառականության խաղացած դերի և հայերի առևտրատնտեսական կապերի ուսումնասիրման համար անգնահատելի նշանակության ունեն առանձին վաճառականների հեղինակած հաշվեմատյանները:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու «Հաշվետումարն» ու Շահվելի որդի Սահրադի «Հաշվեմատյանը»:

Հովհաննես Տեր-Դավթյանը սերում է Նոր Ջուղայի առևտրական ընտանիքից: Սովորել է տեղի Կոստանդ Ջուղայեցու համբավավոր դպրոցում: Նախապես առևտրով զբաղվել է Իզմիրում և Բուրսայում: 1682թ. Գնացել է Հնդկաստան, առևտրով զբաղվել Սուրաթ, Ագրա, Ավրանգաբադ, Բերամփուտ և Լաշկար քաղաքներում: 1686 թ. Հաղթահարելով Հիմալայան լեռները՝ անցել Նեպալ, և ապա Տիբեթ: Տեր-Դավթյանը ամբողջ հինգ տարի մնացել է Տիբեթի Լհասա մայրաքաղաքում:

Այստեղ սովորել է տիբեթերեն, զբաղվել առուծախով: Յուրաքանչյուր առևտրական գործարքի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ է թողել իր Հաշվետումարում: Սա յուրատեսակ օրագիր-օրահաշիվ է, որտեղ հեղինակը ջուղայեցվոց բարբառով մանրամասն գրառումներ է կատարել 1682-1693 թթ. իր առևտրական գործունեության, առևտրափոխանակական գործարքների ու բանկային գործառույթների վերաբերյալ: Հեղինակը քաջատեղյակ է տարբեր երկրներում գործարծվող չափ ու կշռի համակարգերին, դրամական միավորներին, ապրանքների գներին, առևտրական մաքսերին, նեմուծվող ու արտահանվող ապրանքների պահանջարկին: Հայ վաճառականի այս գրվածքն իր ստույգությամբ ու արժանահավատությամբ, անշուշտ, առաջնա-

կարգ սկզբնաղբյուր է XVII դարի վերջերի Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի տնտեսության ու մանավանդ առևտրա-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար: Հաշվետվությունը եզակի տեղեկություններ է պարունակում նաև Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի հայկական գաղթավայրերի վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա վկայությունները հայ-չինական առևտրա-տնտեսական կապերի մասին[124]:

Եթե Հովհաննես Տեր-Դավթյանի առևտրական հետաքրքրությունների ծիրը Հնդկաստանն էր և Տիբեթը, ապա Շահվելու որդի Սահրադի համար այն Սպահան, Թավրիզ, Շամախի, Աստրախան, Մոսկվա, Արխանգելսկ, Ամստերդամ և հակառակ՝ Ամստերդամ, Սպահան ուղեգիծն էր: Սահրադը ևս սովորություն է ունեցել իր առևտրական գործունեության մանրամասները գրի առնելու հատուկ հաշվեմատյանում: Այս գրառումների շնորհիվ է, որ ստեղծվել է այս նշանավոր մատյանը, որը համարվում է հայ առևտրական կապիտալի ուսումնասիրման ամենաարժեքավոր սկզբնաղբյուրներից մեկը[125]: Սահրադի Հաշվեմատյանը ընդգրկում է ընդամենը ութ տարվա՝ 1711-1718 թթ., ընթացքում նրա ծավալած առևտրական գործունեության նկարա-

---

[124] «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու Հաշվետումարը», աշխատասիրությամբ՝ Լ.Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Երևան, 1984:

[125] «Շահվելու որդի Սահրադի Հաշվեմատյանը», աշխատասիրությամբ՝ Շ.Լ.Խաչիկյանի, Երևան, 1994:

գիրը: Այստեղ հեղինակը բարեխղճորեն ներկայացրել է այդ տարիների ընթացքում Պարսկաստանի, Ռուսաստանի և Հոլանդիայի տարբեր շուկաներում իր կողմից գնված ու վաճառված ապրանքների, ճանապարհածախսերի, մաքսերի ու տուրքերի, դրամական գործառույթների, կնքված առևտրական պայմանագրերի և հարակից այլ հարցերի մասին մանրամասն հաշվետվություն: Հետաքրքիր կլինի ծանոթանալ անձամբ Սահրադի կողմից Ռուսաստան և Հոլանդիա ներմուծվող, ապա այդ երկրներից Պարսկաստան արտահանվող ապրանքների ցանկի հետ: Այսպես, 1711-1718 թթ. ընթացքում նա Ռուսաստան է ներմուծել 132 հակ հում մետաքս՝ 16 տոննա ընդհանուր քաշով, ապա՝ խունկ, սուրճ, համեմունքներ, գորգեր, դիպակ, թավիշ, լեղակ, թանկարժեք քարեր՝ ալմաստ, սուտակ, շափյուղա, մարգարիտ, նռնաքար, ագատ և այլն: Արտահանել է մորթիներ, մուշտակեղեն, կաշի, մոմ, հացահատիկ, քաթան, մահուդ, ժանյակ, չիթ, շալեղեն, ժամացույց, ոսկերչական իրեր, հայելիներ, գդալ-պատառաքաղ և այլն: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում զենքի, հատկապես տարբեր չափերի ատրճանակների և հայերեն գրքերի գնման վերաբերյալ փաստերը: Ուշադրության է արժանի նաև Սահրադի հաղորդած եզակի տեղեկությունը հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի մասին, որի հետ նա հանդիպել է Ամստերդամում, դեռևս 1714 թ. հուլիսին:

Միջնադարյան Հայաստանի յուրաքանչյուր պատմաշրջանի քաղաքական, տնտեսական ու մշակութային հարցերի ուսումնասիրության համար առանձնակի արժեք ունեն նաև ձեռագրաց հիշատակարանները: Հիշատակարանները հայ պատմագիտական մտքի յուրօրինակ արտահայտություններ են, որ մասամբ փոխարինել են պատմագրական ստեղծագործություններին դրանց բացակայության պարագայում:

Հիշատակարանները ձեռագրական արձանագրություններ են, որտեղ կարևոր տեղեկություններ են հաղորդվում տվյալ ձեռագրի ստեղծման հանգամանքների վերաբերյալ և ունեն պատմաճանաչողական անուրանալի արժեք: Հետևաբար, պատահական չպետք է համարել, որ գրական այդ միավորները համարվում են ոչ միայն պատմական սկզբնաղբյուրներ, այլ նաև պատմագրական հուշարձաններ:

Քննարկվող ժամանակաշրջանների ձեռագրաց հիշատակարանների արժևորումը մանրակրկտորեն կատարել է նշանավոր պատմաբան, աղբյուրագետ Լևոն Խաչիկյանը[126]:

Կարծիք կա, որ ձեռագրաց հիշատակարանները ստեղծվել են վիմագիր արձանագրությունների հետևու-

---

[126] Լ. Ս. Խաչիկյան, Առաջաբան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401-1450թթ.), Երևան, 1955, էջ VII- LXVI: Հիշատակարանների պատմագեղարվեստական արժևորմանն է նվիրված բանասեր Հ. Բախչինյանի « Հայկական ձեռագրերի հիշատակարանները» մենագրությունը (Երևան, 1980):

թյամբ, և ձեռք բերել առանձին գրական տեսակի արժեք, մասնավորապես XIV-XVII դդ. ընթացքում[127]:

Պատմագրական լայն կտավի ստեղծագործությունների բացակայության պայմաններում, բնականաբար, հիշատակարանները, ձեռք են բերում անուրանալի նշանակություն: Դրանք հակիրճ, երբեմն էլ մանրամասն փաստեր են հաղորդում ժամանակաշրջանի հայ ժողովրդի ներքին ու արտաքին կյանքի, տնտեսության, մշակույթի արհեստագործության, առևտրի, քաղաքների ու գյուղերի, օտար տիրապետողների հարկային, կրոնական ու ազգային քաղաքականության վերաբերյալ: Իսկ հայկական գաղթավայրերում ստեղծված հիշատակարանները եզակի տեղեկություններ են հայտնում օտար ափերում հանգրվանած հայության կյանքի մասին: Բնականաբար, հիշատակարանային

---

[127] Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի XIV-XVII դարերի, հայերեն ձեռագրաց հիշատակարանները հրատարակել են Լ. Ս. Խաչիկյանը, {«Հայերեն ձեռագրերի հիշատակարանները», ԺԴ դար, կազմեց Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1950; ԺԵ դար, մասն առաջին (1401-1450 թթ.), Երևան, 1955; մասն երկրորդ (1451-1480 թթ.), Երևան, 1958; մասն երրորդ (1481-1500 թթ.), Երևան, 1967}, Ա. Գ. Հովհաննիսյանն ու Վ. Կ. Հակոբյանը տե՛ս «Հայկական ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարանները», հատոր Ա (1601-1620 թթ.), Երևան, 1974, հատոր Բ (1621-1640 թթ.), Երևան, 1978, հատոր Գ (1641-1660 թթ.), Երևան, 1984 :
Ցավոք, այս հույժ կարևոր բնագավառում աշխատանքներն ընդհատվել են, իսկ XVI դարի հիշատակարանները ընդհանրապես չեն համախմբվել: Սա մի հանգամանք, որ պետք է զբաղեցնի պատմագիտական հիմնարկությունների առաջնահերթ ուշադրությունը:

նյութերի բացակայության պայմաններում հնարավոր չէր լինի քննարկման առարկա դարձնել ամբողջական պատմաշրջանների, մասնավորապես XIV-XVII դդ., ինչպես հայաստայան, այնպես էլ գաղթավայրերի հայկական կյանքի դիմապատկերը:

Թեմատիկ նյութի ընդգրկմամբ հիշատակարանները ոչ միայն պատմական առանձին փաստեր արձանագրողներ են, այլև գաղափարախոսական, աշխարհայացքային, կրոնադավանաբանական խնդիրներ արծարծող ու հաճախ դրանց լուծումը առաջարկող մանր երկասիրություններ են:

Հայ մշակութային ու քաղաքական կյանքի պատմության ուսումնասիրության տեսանկյունից առավել կարևորություն ունեն կենսագրական և ինքնակենսագրական հիշատակարանները: Դրանցում ներկայացվում են ժամանակաշրջանի երևելի անհատների կենսագրությունը կամ առանձին դրվագներ նրանց կյանքից: Ինչպես օրինակ Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու, Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսի, պարսից շահ Սեֆյան Իսմայիլ I –ի, Լենկ-Թեմուրի և այլն:

Զգալի են այն հիշատակարանները, որոնցում փորձ է կատարվում պատճառաբանել ու գնահատել պատմական երևույթները, հույս և հավատ ներշնչել հայրենիքի ազատագրման ու հայկական թագավորության վերականգնման գաղափարի նկատմամբ: Անշուշտ, հետևելով ժամանակաշրջանի մտածողության միտումներին ու հավատարիմ

մնալով դրանց, հիշատակագիրները Հայաստանի թշվառ վիճակը, պետականության կորուստը բացատրել են մարդ արարածի՝ անհատական, ու ժողովրդի՝ հավաքական մեղքերով. «եւ այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց» նշանաբանով, քանզի «աղոթք եւ աղաչանք չունենք առ Աստված, որ մեզ ողորմի»[128]: Հասարակական աղետներն ու երկրում ստեղծված թշվառ իրավիճակը հաճախ բացատրվել է մեր՝ հայերիս ագահությամբ ու ընչաքաղցությամբ. «Ագահութիւն նման հրի, քանի ձգեն կու բորբոքի»[129]: Ստեղծված կացությունից դուրս գալու ելքը անհատ մարդու ու ժողովրդի մեղքերը քավելն է, անցյալի բարի ժամանակների բարքերին վերադառնալը, երբ տիրապետում էին բարեպաշտությունը, միասնությունը, եղբայրությունն ու սերը, մարդու, երկրի և ամենայնի նկատմամբ: Անդրադառնալով պատմական անցյալին՝ այդ բարի ժամանակներին, և շեշտելով Հայաստանի երբեմնի փառքը, հիշելով հայոց իշխաններին ու թագավորներին՝ «Որ իբրև զարեգակունս և զլուսինս բազմայոյզ աստեղային զլոյս արձակէին, եւ իբրեւ զջահ անշիջանելի կային... ի պարծանս հայոց ազգիս»[130]՝ հիշատակագիրները բարձրաձայնում են հայկական պետականության վերականգնման գաղափարը:

---

[128] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, էջ 60:
[129] Նույնը, էջ 385:
[130] Նույնը, էջ 382:

Դեռևս ժամանակին Ստեփանոս Օրբելյանն էր փայփայում հայրապետական աթոռի Վաղարշապատ տեղափոխելու անհրաժեշտության գաղափարը, դա նախահիմք համարելով պետականության վերականգնման գործընթացում[131]: Արդեն XIV-XVII դդ. բազմաթիվ հիշատակագիրներ վստահեցնում են, որ ի վերջո Աստված բացելու է ողորմության դուռը և « վերստին նորոգեսցէ զհայրապետութիւն եւ զթագաւորութիւն տառապեալ ազգիս հայոց»[132]: Հիշատակագիրները ցնծությամբ են արձանագրում 1441 թվականի ակտը Վաղարշապատում Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը: Այս երևույթը նրանց համար դարձել է նոր ոգեշնչման աղբյուր, որի լավագույն օրինակը Թովմա Մեծոփեցու արդեն հիշատակված «Յիշատակարանն» է:

1465 թ-ին հայոց թագավորության վերականգմամբ մի անսպասելի ու զարմանալի ակտ է տեղի ունենում Աղթամարում, երբ տեղի Ստեփանոս Դ կաթողիկոսը թուրքմեն տիրակալ Ջհան շահի համաձայնությամբ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում մեծ հանդիսավորությամբ իր եղբորորդի Սմբատին օծեց Հայոց թագավոր[133]: Այս զարմանահրաշ

---

[131] «Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկեն», հրատ. Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1885:

[132] Հ Բախչինյան, նշվ. աշխ. , էջ 85

[133] Այս իրադարձության մանրամասները տե՛ս մեր հոդվածում՝ Ա. Ա. Ուրուջյան, Հայկական պետականության վերականգնման փորձ ԺԵ դարի կեսերին, «Հայկազյան հայագիտական հանդես», հատոր XIX, Բեյրութ 1999, էջ 107-122:

ակտին անդրադարձել են բազմաթիվ հիշատակագիրներ, որոնցից մեկը գրում է. «եւ յայն ժամ օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց գագկայ, զի վաղուց անտի ազգս հայոց չէր տեսեալ թագաւոր», այնուհետև հույս հայտնում, որ «Փրկիչն մեր Քրիստոս զօրացուսցէ զնա եւ բարձրացուսցէ զաթոռ իշխանութեան մերոյ»[134]:

Պետք է նշել, որ հայկական հիշատակարանները, լինելով պատմական վավերագրեր, երբեմն դուրս են գալիս ազգային շրջանակից, և արժեքավոր տեղեկություններ հայտնում հարևան և հեռավոր ժողովուրդների ներքին կյանքի, արտաքին քաղաքականության ամենատարբեր կողմերի վերաբերյալ: Անշուշտ, սրանով պետք է բացատրել հայկական հիշատակարանների (թեկուզ փոքրաթիվ) օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, վրացերեն թարգմանվելու իրողությունը[135]:

---

[134] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատոր Բ, էջ 239: Սմբատի թագադրման և թագավորության կարճատև ժամանակաշրջանին (1465- մոտ. 1471 թթ.) են անդրադարձել հետևյալ հիշատակարանները «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 237, 249, 309, 312 և այլն, հմմտ. Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ I, Թիֆլիս 1915, էջ 428:

[135] Օրինակ վրաց ժամանակակից պատմաբան Ալեքսանդր Աբդալաձեի կազմած « XV դարի հայկական ձեռագրերի հիշատակարանների տեղեկությունները Վրաստանի մասին» արժեքավոր ժողովածուն (վրացերեն, Թբիլիսի, 1976): Այս պատմաշրջանի հիշատակարանների հիման վրա է, որ նույն պատմաբանը շարադրել է « XIV-XV դարերի հայկական հիշատակարանների տեղեկությունները Վրաստանի մասին» մենագրությունը, (վրացերեն, Թբիլիսի, 1978):

Անշուշտ, հասկանալի է, որ պատմաշրջանի պատմագիտական այս միավորների մեջ բացակայում են դեպքերի խոր վերլուծությունը, ներքին կապակցվածությունը, հեղինակային ընդհանրացումները և այլն, սակայն, դրանք երբևիցե չեն նսեմացնում հիշատակարանների արժեքը որպես սկզբնաղբյուր և պատմագրական միավոր:

XIV-XVII դդ. հայ պատմագիտական միտքը թեև ծանր փորձություններին, անասելի դժվարություններին, ունեցավ որոշակի զարգացում: Հասարակության մեջ պատմության նկատմամբ աճեց հետաքրքրությունը, առաջնային դարձավ ժողովրդին ինքնաճանաչ դարձնելու գործում պատմության դերի կարևորությունը:

Տվյալ պատմաշրջանի պատմագիտական միտքը որոշակի առանձնահատկություններ ունի նախորդ պատմաշրջանների պատմագիտական մտքից: Ինչպես գիտենք, պատմագիտության զարգացման տեսակետից չափազանց կարևոր մի փուլ է IX-XIII դարերը: Այստեղ պատմագիտության աշխարհականացման մի եզակի փորձ կա միայն, որն է Անանուն Զրուցագիրը (IX դարի կես-X դարի սկիզբ): Մեկ ուրիշ օրինակ է Սմբատ Սպարապետը իր Տարեգրքով: Մեզ հետաքրքրող պատմաշրջանում աշխարհական պատմագիրները թիվը, նաև օրագրողներ, ճանապարհորդներ և այլն, բավականին մեծ թիվ են կազմում: Սա նշանակում է, որ պատմագիտության թեմատիկան աշխարհականանում է: Առաջին պլան են մղվում նաև աշխարհիկ կյանքի հոգսերը, խնդիրն-

երը, լուսավորության, քաղաքական ազատության անհրաժեշտության մասին գաղափարները:

Մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պատմագիրներից և ոչ մեկը իրենց երկասիրությունները չեն սկսում աշտարակաշինությունից, նրանց հետաքրքրում է իրենց օրերի կամ ոչ վաղ անցյալի իրողությունները: Որպես կանոն նրանք համարյա բոլորն էլ մասնակից են ու ականատես նկարագրվող իրադարձություններին:

Պատմագիրներն իրենց ուշադրությունն են բևեռում նաև գաղթավայրերի պատմությանը՝ հետաքրքրվելով տարագիր հայ մարդու կյանքով, գործով: Բնականաբար, տեղեկություններ հայտնելով նաև այն երկրների պատմության վերաբերյալ, որոնք ընդունել են հայերին: Այսինքն պատմությունը դուրս է գալիս ազգային նեղ շրջանից և որոշ առումով այն իր կարևոր նպաստն է բերում այս կամ այն երկրի պատմության ուսումնասիրության գործին:

Եվ վերջապես կարևոր առանձնահատկություն է այն, որ պատմաշրջանի պատմագիրների լեզուն առանձին բացառություններով, ժամանակի խոսակցական լեզուն է, որը, բնականաբար, իր դերն է ունենում այդ երկասիրությունները ընկալելու և իմաստավորելու համար:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ա. ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990:
2. Ավետիք Տիգրանակերտցի, Վասն, որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ, տե՛ս «Բազմավեպ», 1897, հոկտեմբեր, էջ 459-463:
3. «Աւգուստինոս Բաջենցւոյ ճանապարհորդութիւն յԵւրոպա», տե՛ս «Նշխարք մատենագրութեան Հայոց», կազմեց Քերովբե Պատկանյան, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5-26:
4. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, հատ. Ա-Գ, հրատարակեց և ծանոթագրեց Վ. Թորգոմյան, Վիեննա, 1913, 1932, 1939:
5. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Ողբ ի վերա, Յակոբ կաթողիկոսի, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1933, N 9-10, էջ 589-595:
6. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն, հրատարակության պատրաստեց Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1939:
7. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982:
8. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Պատմութիւն հրկիզման Կոստանդնուպօլսոյ, հրատարակության պատրաստեց Գ. Բամպուքճյան, Ստանպոլ, 1991:
9. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Համառօտ պատմութիւնք թագաւորաց Օսմանցոց, տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 1786:
10. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Տարեգրական պատմութիւն, տե՛ս Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարան, Ձեռագիր N 509:

11. Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, Համառօտ հարցմունք եւ պատասխանիք, տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 72, էջ 131 ա-173 ա:
12. Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938:
13. Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870:
14. Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015:
15. Թադեոս վրդ. Մեբաստացի, Տաղ վասն Կարմիր գլխոյն, որ եկեալ այրեաց եւ աւերեաց զՀայոց աշխարհս մինչեւ Եզընկան, Հ. Քյուրտյանի աշխատասիրությամբ, տե՛ս «Հայաստանյաց եկեղեցի» ամսագիր, Նյու-Յորք, 1943, էջ 411-413:
16. Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999:
17. Թովմա Մեծոփեցի, Պատմագրական երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Մաղոյանի, Երևան, 2003:
18. «Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը», հրատարակեց Կ. Կոստանյանցը, Թիֆլիս, 1892:
19. «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ», հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանյան, Երուսաղեմ, 1915:
20. «ԺԷ-ԺԸ դարերի ուղեգրություններ», հատ. 1-2, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մաղոյանի, Երևան, 2005:
21. «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)», աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963:

22. «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ», աշխատասիրությամբ Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1896:
23. Կարապետ Բաղիշեցի, Ողբ ի վերայ արշավանացն շահ Իսմայէլի, Ներսես վրդ. Ակինյանի աշխատասիրությամբ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 338-343:
24. Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, աշխատասիրությամբ Կ. Կոստանյանցի, Վաղարշապատ, 1903:
25. Հակոբ Կարնեցի, Ժամանակագրութիւն, տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հատ. 1, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 239-245:
26. Հակոբ Կարնեցի, Պատմութիւն վասն հօրն մերում Գէորգա քահանային, տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հատ. 1, էջ 246-249:
27. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:
28. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
29. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958:
30. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
31. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ դար, հատ. Ա (1601-1620 թթ.), կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974:
32. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ դար, հատ. Բ (1621-1640 թթ.), կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978:

33. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ դար, հատ. Գ (1641-1660 թթ.), կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984:
34. «Հայոց նոր վկաները (1155-1843)», աշխատությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903:
35. Հովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրությամբ Հ. Ս. Անասյանի, Երևան, 1964:
36. Հովհաննես Մակվեցի, Ողբ Հայաստանաց աշխարհի յԵրեւանայ և Ջուղայու, տե՛ս Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), էջ 274-279:
37. «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվետումարը», աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Երևան, 1984:
38. «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951:
39. «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956:
40. Մարտիրոս Երզնկացի, Այս է պատմությունը Ֆռանգների երկրի, որ տեսել է Երզնկացի Մարտիրոս եպիսկոպոսը և գրել քաղաքների մասին, որտեղ տեսա իմ աչքով և այսպես եղավ, տե՛ս «ԺԷ-ԺԸ դարերի ուղեգրություններ թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները, Ա. Մադոյանի, Երևան, 2005, էջ 31-39:
41. Մինաս Թոխաթեցի, Ողբ ի վերայ Օլախաց երկրի, տե՛ս Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921:
42. «Յիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում, զոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականուն Ծերենց կոչի Խլաթեցի». պատմական վիպասություն, հրատարակեց Գր. Խալաթյանց, Վաղարշապատ, 1897:
43. «Նշխարք մատենագրութեան Հայոց», հրատարակության է պատրաստել Ք. Պատկանյանը, Ս. Պետերբուրգ, 1884:

44. Շահմուրատ Բաղիշեցի, Պատմութիւն Վերսալիայ քաղաքին Ֆրանկաց, աշխատասիրությամբ Գ. Պատկանյանի, տե՛ս «Արարատ», ամսագիր, Թիֆլիս, 1850, N 7, 21 հոկտեմբերի, էջ 99-101:
45. Շահմուրատ Բաղիշեցի, Պատմութիւն Վերսալիայ քաղաքին Ֆրանկաց, բնագիրը և Հովսեփ Օրբելու ռուսերեն թարգմանությունը՝ «Описние Версаля в армянской записи 1683 года», տե՛ս «Известия Российской академии истории материальной культуры», т. 1: Բ հրատարակություն՝ И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 532-538:
46. «Շահվելու որդի Սահրադի Հաշվեմատյանը», աշխատասիրությամբ Շ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1994:
47. «Ողբ ի վերայ մանկանց, որ գերի տարան ի քաղաքն Ստամպօլ», Ներսես Ակինյանի աշխատասիրությամբ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 592-595:
48. «Պատմութիւն երկիրն Հապաշստանա, զոր գնաց ումն ի վարդապետաց եւ գրել զպատմութիւն Հապաշստանայ ետոր աշխարհի», տե՛ս Մաշտեցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 737, էջ 201 ա-202 բ:
49. «Պատմութիւն Մեծի Ռաբունապետին Թումայի, զոր արարեալ Կիրակոս Բանասէր վարդապետի», տե՛ս «Արարատ», ամսագիր, 1913, N 9, 10, 12: 1914, N 1: Նույնը առանձին գրքով, Վաղարշապատ, 1914:
50. Սարգիս աբեղա, Ուղեգրություն, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», ամսագիր, 1996, N 1, էջ 33-39:
51. Սարգիս աբեղա, Ուղեգրություն, աշխարհաբար թարգմանությունը Արշակ Մաղոյանի, տե՛ս «Արաքս», ամսագիր, 1996, N 1, էջ 33-39:

52. Սեբէոս, Պատմութիւն, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979:
53. Սիմեոն Ապարանեցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870:
54. Սիմեոն Ապարանեցի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Կ. Սուքիասյանի, Երևան, 1976:
55. Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, աշխարհաբար թարգմանությունը Ա. Գ. Մաղոյանի, Երևան, 1992:
56. Սիմէօն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն տարեգրութիւն և յիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936:
57. «Ստեփանոս Օրբէլեանի Ողբ ի Ս. Կաթողիկեն», հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885:
58. Օգոստինոս Բաջենց, Ճանապարհորդութիւն, աշխատասիրությամբ Կ. Բասմաճյանի, տե՛ս «Բանասեր», գիրք Գ, Փարիզ, 1899, էջ 222-297:
59. «Օգոստինոս Բաջենցու Ճանապարհորդությունը», աշխարհաբար թարգմանությունը Ա. Մաղոյանի, տե՛ս «Արաքս», ամսագիր, 1996, N 2, էջ 63-79:
60. Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян-Меликян, Москва, 1969.
61. «История Хотинской войны Иоаннеса Каменецкого», տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, N 2, էջ 258-286, (թարգմանությունը՝ Կ. Ն. Յուզբաշյանի):

Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աբգարյան Գ., Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը, Երևան, 1965:
2. Աբեղյան Մ., Երկեր, հատ. Դ, Երևան, 1970:
3. Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896:
4. Ալիշան Ղ., Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետիկ, 1896:
5. Ալիշան Ղ., Հայապատում. պատմիչք և պատմությունք Հայոց, Վենետիկ, 1901:
6. Ալպոյաճյան Ա., Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը Հապաշատան ԺԷ դարում, Կահիրե, 1946:
7. Ակինյան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921:
8. Ակինյան Ն., Երեմիա Չելեպի Քյոմուրճյան. կյանքն ու գրական գործունեություն, Վիեննա, 1933:
9. Աղավնունի Մ., Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929:
10. Այվազյան Գ., Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 2012, N 8, էջ 48-54:
11. Այվազյան Գ., Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի ձեռագրական ժառանգությունը, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», գիրք 20, Երևան, 2014, էջ 349-398:
12. Անասյան Հ. XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:
13. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հատ. Բ, Երևան, 1976:
14. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատ. 1-3, Երևան, 1959-1975:

15. Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984:
16. Բախչինյան Հ., Հայկական ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1980:
17. Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության ակզբնաղբյուր, Երևան, 1978:
18. Դարբինյան Մ. Հ., Հայ պատմագրությունը XIV-XVIII դարերում, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 491-5003:
19. Զարբհանալյան Գ., Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883:
20. Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897:
21. Զուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:
22. Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ Ա, Թիֆլիս, 1915:
23. Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1969:
24. Խաչիկյան Լ. Ս., Առաջաբան, տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ VII-XXXII:
25. Խաչիկյան Լ.Ս., Առաջաբան, տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401-1450), Երևան, 1955, էջ VII-LXVI:
26. Խաչիկյան Լ. Ս., Աշխատություններ, հատ. Ա, Երևան, 1995:
27. Հովհաննիսյան Պ. Հ., Հայ պատմագրությունը ուշ միջնադարում, տե՛ս «Հայոց պատմություն», հատ. II, գիրք երրորդ, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 2014, էջ 641-648:

28. Հովհաննիսյան Պ. Հ., Հայ պատմագրությունը XVII դարի երկրորդ և XVIII դարի առաջին կեսին, հատ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 104-111:
29. Հովսեփյան Գ., Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նոր նյութերով), Վաղարշապատ, 1914:
30. Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, հատ. 1 (Ա-Մ), Վենետիկ, 1909-1912:
31. Ճեմճեմյան Ս., Ֆրա Օգոստինոս եպիսկոպոս Բաջենցի գործունեությունը, տե՛ս «Բազմավեպ», 1990, N 3-4, էջ 330-344: 1991, N 1-2, էջ 64-76:
32. Մալխասյան Մ., Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը, որպես պատմաշխարհագրական հետազոտությունների աղբյուր, Ս. Էջմիածին, 2009:
33. Մարաբյան Ս., Գրիգոր Խլաթեցու պատմագիտական երկերը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 2, էջ 128-136:
34. Մելիք-Բախշյան Ստ. Տ., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1979, 1989, 1996:
35. Մելքոնյան Ա. Ա., Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում 16-18-րդ դարերում, տե՛ս «Հայոց պատմության հարցեր», N 5, 2005, էջ 47-60:
36. Չոպանյան Պ., Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին, տե՛ս «Լրաբեր», ՀԽՍՀ ԳԱ (հասարակ. գիտ.), 1973, N 7, էջ 96-107:
37. Պոզարյան Ն., Հայ գրողներ (Ե-ԺԷ դար), Երուսաղեմ, 1971:
38. Սահակյան Հ., Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964:
39. Սարյան Ա. Գ., ԺԷ դարի հայկական ուղեգրություններ, Երևան, 2000:

40. Սուքիասյան Կ., Սիմեոն Ապարանեցու վիպասանության աղբյուրները, տե՛ս «Լրաբեր» ՀԽՍՀ ԳԱ (հասարակ. գիտ.), 1970, N 8, էջ 30-38:
41. Ութուջյան Ա. Ա., Հայկական պետականության վերականգման փորձ ԺԵ դարի կեսին, տե՛ս «Հայկազյան հայագիտական հանդես», հատ. 19, Բեյրութ, 1999, էջ 107-122:
42. Ուլուհոճյան Գ., Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի նորահայտ քարտեզը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 2, էջ 185-188:
43. Փաչաճյան Ս., Հուշամատյան Ռոդոստոյի հայերուն (1606-1922), Բեյրութ, 1971:
44. Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության (սկզբից մինչև մեր օրերը), Թիֆլիս, 1910:
45. Փիրղալեմյան Ղ., Նոտարք Հայոց, Կ. Պոլիս, 1888:
46. Քիսպարյան Կ., Պատմություն հայ հին գրականության, Վենետիկ, 1944, լրացված և համալրված հրատարակություն՝ Վենետիկ, 1992:
47. Օրմանյան Մ., Ազգապատում, Բ. հատ. Ս. Էջմիածին, 2001:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (համառոտ ակնարկ) 5

ՊԱՏՄԱԳԻՏԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ 12

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XVI ԴԱՐՈՒՄ 23

XVII ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 38

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 104

Ա. Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Սրբագրիչ՝ Ն. Դավթյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 20.09.2016 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[Ֆ 200 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0450022

A V
102441